

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԾՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԻ
ԱԶԴԱՅԻՆ ՊԱՅԻՔԱՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԻ

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՂՈՅ

ԲԱՆՈՒՄ 1878 ԱՄԻ

ՆԻՍՏ ԺԲ

10 ՆՈՅՆԱՐԵՐ 1878

ԻՐԱԿՈՒՆԻ ԵՎ ՊԱՐՏԵՐ

— ԿՈՄՄԱՆԴԱՆՈՒԳՈՒՄ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՎ Մ՝ ՏՆՏԵՍԱՆ

— 1878 —

ԴԻԻԱՆՔ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՑ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Սահման փաշա Աղանեան	Ա. Արեւ-դեր
Տիգրան Էֆենտի Կուսուֆեան	Բ. »
Յովհաննէս Էֆենտի Նուրեան	Գ. »
Համբարձում Էֆենտի Ա. Ալանեան	Ա. Արեւ-դեր
Մկրտիչ Էֆենտի Մելիքեան	Բ. »
Աստվ Էֆենտի Տէրոյէնց	Գ. »

ՉԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Մատթէոս Կախկոպոս Խլիբեան	Ա. Արեւ-դեր
Ներսէս փարպապետ Աղանեան	
Սենեքերիմ Էֆենտի Մանուկեան	

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Խորէն Արքեպիսկոպոս Նար-պէյ	Ա. Արեւ-դեր
Գէորգ Էֆենտի Ազատեան	
Գէորգ Էֆենտի Սիմոնեան	

ԿԱԼՈՒԱՆՈՑ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Կասեան	Ա. Արեւ-դեր
Մինաս Էֆենտի Գարամանեան	
Պօղոս Էֆենտի Ժամակոչեան	

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Էֆենտի Շահապազեան	Ա. Արեւ-դեր
Յարութիւն Էֆենտի Մելիքեան-Պարի	
Սահման Էֆենտի Փարապետեան	

ՀԱՅԱՐԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Առաքել Էֆենտի Ալիբեկ-Տիգրի	Ա. Արեւ-դեր
Մատթէոս Էֆենտի Ալիբեկեան	
Յակոբ Էֆենտի Արշակ	

ԻՐԱՒԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Կարապետ Կախկոպոս Սերոբեան	Ա. Արեւ-դեր
Թաղէոս Էֆենտի Պէկեան	
Սահակ Ապրո Էֆենտի	

ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յովհաննէս Էֆենտի Պոյաճեան	Ա. Արեւ-դեր
Մկրտիչ Էֆենտի Կասեան	
Տաթև ֆէլախմանեան Էֆենտի	

ԻՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

Յարութիւն Էֆենտի Նորասունեան	Ա. Արեւ-դեր
Աստվ Էֆենտի Տէրոյէնց	
Գարրիէլ Էֆենտի Գրասեան	

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1878 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԲ.

40 ՆՈՅՆՄԱՐ 1878

ՆԱԽԱԳԱՀ. — Աճն. Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հայր
ԱՏԵՆԱԳԵՏ. — Սահման փաշա Աղանեան

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԵԱՆՔ	ԱՏԵՆԱՐՀԱԿԱՆՔ (Ա. ՎԻՃԱԿ)	ԵՆԻԷ-Ի--
1 Խորէն Արքեպ Նար Պէյ	Գ--Բ-Ի--Ի, ԿԵ-ԻԻ Ի--Ի--Լ	41 Զարեհ ֆերոզբէ Բ2
2 Կարապետ Կպո. Սերոբեան Բ2	Գ--Բ-Ի--Ի Գ--Բ-Ի--Ի Գ--Բ-Ի--Ի	42 Մկրտիչ Քիւրքճիւսանլեան Բ5
3 Մատթէոս Էֆենտի Խլիբեան Բ2		43 Պօղոս Ժամակոչեան
4 Ամբրոսիոս Վ. Բուրիսեան Բ Պ		44 Սեպուհ Մադսուտեան Բ 10
5 Գարեգիլն Եթարեան Բ Պ		Ի--ԻԻ--Ի--Ի Ա. Խ--Ի
6 Խորէն Եթարեան Բ Պ		45 Թաղէոս Պէկեան Բ 2
7 Հայկեակ Եթարեան Բ7		46 Ամեն Յէլէկեան
8 Յովհաննէս Եթարեան Բ 2		47 Սահման Աղանեան
9 Ներսէս Եթարեան		48
10 Պօղոս Եթարեան Բ		Ի--ԻԻ--Ի--Ի Ա. Կ--Ի--Ի--Ի
11 Արսակ. Ք. Մամբրէն Բ 4		49 Միհրան Պաշտօնաւոր Բ
12 Գէորգ Եթարեան Բ 4		50 Պօղոս Թորոյ ոմեան Բ 2
13 Գրիգոր Եթարեան Բ		51 Նիկողոս Ալանեան Բ 4
14 Խորէն Եթարեան Բ		52 Տրդատ Փարապետեան Բ Պ
15 Յարութիւն Եթարեան Բ		(Գ. ՎԻՃԱԿ)
16 Յովհաննէս Եթարեան Բ Պ		ԲԻԷ-Լ Գ--Բ-Ի--Ի
17 Սուրբաս Եթարեան Բ		53 Արիկ Ունեան
18 Սահակ Եթարեան Բ		54 Գրիգոր Սէլիմլի ճեան
19		55 Մարտիրոս Յ. Տիլեան Բ
20		56 Միքայէլ Մամիկոնեան Բ2
	(Բ. ՎԻՃԱԿ)	57 Նշան ֆաղապետ Բ Պ
	ՊԵՆԻԷ-Ի	58 Սահման Խոյ իրեան
Բ. Բացակայութիւն տարիներ	58 Անդրանիկ Կրճիկեան Բ 2	59 Տեղեմար Կրճիկեան Բ2
Բ 2 Բացակայութիւն երկրորդ	59 Ալիքսան Սորասունեան Բ 5	60 Յարութիւն Նորասունեան
Բ 4 Բացակայութիւն երրորդ	40 Բարսեղ Հալանեան Բ	

Մէջ-էջ-ը

- 65 Յակոբ Նորատուհնեան
- 64 Տիգրան Առաջին
- 65
- 66
- 67 Պէտրոս Լ Ղազար
- 68 Յ. Մէրեմիա-Գուր

(Գ. Վ. Ի. Զ. Ա. Կ.)

- 69 Յովնաննէս Լստեան Բ 6
- 70 Ստեփան Պէյլիկեան
- 71 Կարապետ Շահապեան Բ 7
- 72 Մկրտիչ Մուրատեան Բ 5

- 73 Յակոբ Եկմէնիսեան
- 74 Պողոս Մկրտիչեան
- 75 Յովնաննէս Մարգարեան
- 76 Գարեգին Յ. Մելիքեան

- 77 Աստիա Իկիտապեան
- 78 Յովնաննէս Նուրեան Բ 4
- 79 Ղազար Հովուեան Բ

- 80 Մկրտիչ Գ. Լսայեան Բ 11
- 81 Յովնաննէս Կրճիկեան
- 82 Թագէտ Թէրեանեան Բ 1

- 83 Յարութիւն Զինծիրճեան Բ 2
- 84

- 85 Ալիքսան Պէյլիքեան Բ 11
- 86 Աւետիս Քոլոզեան Բ 4
- 87 Եղիազար Մելիքեան Բ
- 88 Մինաս Ճաֆեան Բ
- 89 Յակոբ Քաղապեան Բ 3
- 90 Յակոբ Ամասեան Բ 4
- 91 Նազարէթ Շահապեան
- 92 Յարութիւն Թիւրեան
- 93 Յակոբ Արշակ Բ
- 94

Խ-էջ-ը

- 95 Առաքել Աթուհի Տիւրքի Բ
- 96 Խաչատուր Միսաքեան Բ
- 97 Իւլիէտ Պէյլիկեան
- 98 Սարգիս Արարհամեան Բ
- 99
- 100

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՅԱՆՔ

- 101
- 102 Մ. Փափապեան Տօբթօր
- 103 Ռուբէն Կիւմիւղէրտ Բ 11
- 104 Կարապետ Սիւթիւնեան
- 105 Պետրոս Միսաքեան Բ 2
- 106
- 107 Կարապետ Խաչիկեան
- 108
- 109 Քրիստոստուր Ղազարոս
- 110
- 111 Համբարձում Ալաճաճեան
- 112 Յովնաննէս Աղնաւորեան
- 113 Յակոբ Իսթիւնեան
- 114

- 115
- 116
- 117 Տիգրան Սինանեան Բ
- 118 Գէորգ Քըլըճեան Բ 4
- 119
- 120
- 121 Ստեփան Փափապեան
- 122 Նշան Գարագալեան Բ
- 123
- 124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ
- 125 Մելքոն Իսկէնտէրեան Բ 2
- 126 Միհրան Զօպանեան
- 127
- 128
- 129
- 130 Մկրտիչ Յ. Մելիքեան
- 131
- 132 Արարհամ Բ. Այլապեան
- 133 Համբարձ. Սարըքէլիքեան
- 134
- 135
- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

- 121 Ստեփան Փափապեան
- 122 Նշան Գարագալեան Բ
- 123
- 124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ
- 125 Մելքոն Իսկէնտէրեան Բ 2
- 126 Միհրան Զօպանեան
- 127
- 128
- 129
- 130 Մկրտիչ Յ. Մելիքեան
- 131
- 132 Արարհամ Բ. Այլապեան
- 133 Համբարձ. Սարըքէլիքեան
- 134
- 135
- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

- 127
- 128
- 129
- 130 Մկրտիչ Յ. Մելիքեան
- 131
- 132 Արարհամ Բ. Այլապեան
- 133 Համբարձ. Սարըքէլիքեան
- 134
- 135
- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

- 136 Մատթէոս Ալիքսանեան
- 137 Լօղօֆէթ Պալեօգեան Բ
- 138 Գէորգ Վարդանեան
- 139 Պապի Պապոսեան
- 140

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Առաջարկութիւն երկուց երեսփոխանաց Պէկեան Էֆէնտի մասին
 Բ. Պատրիարքարանի պաշտօնակալաց ամսականի խնդիր
 Գ. Տեղեկագիր Յարաբերութեան դիւանի, Հիւանդանոցի հոգարարձու-
 թեան դէմ եղած գանդատանաց վրայ
 Դ. Տեղեկագիր Նախաձեռնութեան դիւանի, Պէկեան Էֆէնտի ամբաս-
 տանագրոյն նկատմամբ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆՔ

Ատեանը բացուեցաւ ժամն 8 ին ի ներ-
 կայութեան 52 երեսփոխանաց. որոց թիւն
 ի վերջոյ յանգեցաւ 46 ի :

- Ազգային երեսփոխաններէն՝
- Տ. Մատթէոս Եղս. Իզմիրեան
- Տ. Հմայեակ Վրդ. Գլխարսեան
- Նշան Էֆ. Քաղապեան
- Տրդատ Փափապեան

Ամեն. Արրազան Պատրիարք Հայրը տը-
 կարութեան պատճառաւ ուշ հասնելով, Ատ-
 եանի բացման պահուն Տ. Խորէն Նար-Պէյ
 Արրազան հրաւիրուեցաւ յառժամեայ նա-
 խագահութիւն խորովին :

Անձնական տկարութեան պատճառաւ այսօր
 բացակայ գտնուելին գրով իմաց տուած
 ըլլալուն համար, զիւր-բ-շ-ի-ն նշանակ-
 ուեցան ներկայութեան տուժարին մէջ :

Ատեանապետ փառան ծանուցանելով որ
 վերջին նիստի ատենագրութիւնը տպարանէն
 ի լոյս ելած բայց մինչև ցայս վայրկեան հա-
 սած չէ, անցաւ անմիջապէս ատենական ու-
 բիշ գործողութեանց :

Այս առթիւ Ատեանապետ փառան Իշ-
 միրեան Արրազանին կողմէ Օրակարգի Ա-
 խնդրոյն նկատմամբ նամակ մը ուղարկուած

ըստ յայտնելով, անոր այժմէն կամ խրնդ-
րոյն յուզման ժամանակ կարողալու կէտը ժո-
ղովոյ կանխին թողուց որոշել :

Ամբասանեան և խիժիւճեան էֆէնտինե-
րուն առաջարկութեան վրայ որոշուեցաւ
եարթի թողուլ յիշեալ նամակին ընթերցուիլ :

2.

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

Ազգային երեսփոխաններէն՝

Պրասկերան Վարդիէլ էֆէնտի յետա-
զայ հրաժարագիրը կարդացուեցաւ :

Ամեն Ս. Պատրիարք Հայր

Ինչպէս ասկից առաջ անձնական
տկարութեան պատճառաւ խմբագրա-
կան գիւանի անդամակցութենէ հրա-
ժեշտս ծանուցի գրով, նոյնպէս և այժմ
դարձեալ նոյն պատճառաւ ազգային
երեսփոխանութենէ հրաժարելու պար-
տաւորիլս յայտնելով,

Մնամ խորին յարգանօք

Ամեն Սրբազնութեանդ

Խոնարհ ծառայ

Գ. Գրեգորեան

26 Հոկ. 1878

Էյուպ

Ատենապետ փաշան ի գիտողութիւն հը-
րաւորեց երեսփոխանները սոյն հրաժարա-
կանին վրայ. սակայն գիտողութիւն ընող
ըստով, իբրև պարզ հրաժարական քուէի
դրուեցաւ և ԸՆԴՈՒՆՈՒԵՑԱԻ միաձայնու-
թեամբ :

Օ Ր Ա Վ Ա Ր Գ

Ա.

ՊԱՏՐԻԱՐԲԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՒԱՑ

ԱՄՍԱՆԻ ԻՆԴԻԲԸ

Ատենապետ փաշան Օրակարգին անցնե-
լու պահուն երբ յայտնեց թէ առաջին խրն-
դիրն է Պէկեան էֆէնտի մասին երկու ե-
րեսփոխանաց ըրած առաջարկութիւնը, ոյր
ազգաւ ուրիշ երկու երեսփոխանաց խրնդ-
րանօք ժողովն նախորդ նախին՝ ստիպողու-
թիւն քուէարկած էր, անմիջապէս Քաղ. Ժո-
ղովոյ Ատենապետ Ստիժարանեան էֆէնտի
խօսք ուղեց, և խօսքն իրեն տրուեցաւ :

ՍՏԻՄԱՐԱՆԱՆ Գ. ԷՅ — Յանուն Քաղ.
Ժողովոյ կը խնդրեմ որ ժողովդ ստիպողա-
կանութիւն և առաջնութիւն ընծայէ պաշ-
տօնէութեան թոշակի խնդրոյն, որն որ Օ-
րակարգին երկրորդ տեղը բռնած և բաւա-
կան ատենէ ի վեր հինցած է: Երկու Քաղ.
Ժողով այս մասին գրած են պատկառելի ժո-
ղովից. պաշտօնեաց ցրուելու վիճակին հա-
սած են. կը խնդրեմ որ առաջ այս խնդիրը
նայուի որոշուի, զի վարչութիւնն ստիպո-
ղական կերպով պէտք ունի ձեր որոշման :

ԱՅՎԱԶԱՆ Ա. ԷՅ — Այո՛. կը կրկնեմ
թէ պաշտօնէից խնդիրն ստիպողական է :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Յ. ԷՅ — Նոյնպէս կը կրկ-
նեմ և ես :

ԱԼԻԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՅ — Քանի որ Պէկե-
ան էֆէնտի նկատմամբ եղած առաջար-
կութիւնն այսօր առաջին խնդիր որոշուած է,
ի՞նչ հարկ կայ զայն յետաձգել. պաշտօնէից
խնդիրն այս անգամ ալ կրնայ մնալ, ինչո՞ւ
Օրակարգ նիս փոխեմք :

Ատենապետ փաշան՝ քուէն կրնայ որո-
շել այս կէտն ըսելով, անմիջապէս քուէի դը-
րաւ, և ժողովն 9 քուէի դէմ 12 քուէով
ՈՐՈՇԵՑ առաջնութիւն ալ Պաշտօնէութեան
թոշակի խնդրոյն :

Ղիւանն անմիջապէս ներկայեց այս մա-
սին Քաղ. Ժողովին եկած նամակն՝ որ կար-
դացուեցաւ. և ահաւասիկ :

Վսեմաշուք Ատենապետ Ազգ. Ժողովոյ

Ազգային ժողովոյց կողմէ Պատրի-
արքարանի պաշտօնէութեան յայտկաց-
եալ 184,000 դշի թոշակի գումարը թըղ-
թագրամի գնոյն անկման և պարէնից
տարապայման սղութեան պատճառաւ
անբաւական ըլլալով, ասկէ առաջ նա-
խորդ Քաղ. Ժողովոյ կողմէ երկիցս Ազ-
գային ժողովոյց առաջարկուած է նոյն
գումարը՝ ողջ թղթագրամի վերածել,
ինչպէս որ Կեդր. սնտուկն կը դանձէ
նոյն գնով: Ասկայն սոյն անօրէնութիւ-
նը մինչև ցարդ յապաղած և պաշտօ-
նէութեան վիճակը հետզհետէ աւելի
ձանրացած է, այնպէս որ մինչև իսկ
պաշտօնեաց ցրուելու վիճակի հասած
են, չկարենալով տակալ այս նեղութեան,
որու ենթարկած է զիրենք մէկ կողմէ
իրենց թոշակաց վրայ արդէն կատար-
ուած կրկնակի զեղջը, և միւս կողմէ՝
հանգամանքներն ժամանակիս :

Ազգ. Քաղաքական ժողովն ստիպո-
ղականութիւն տեսնելով այս մասին
պէտք եղած անօրէնութիւնը փութա-
ցնելու, պարտ կը համարի Ազգ. Ժո-
ղովդ գիմել և առաջարկել որ հաճի
փութացնել իւր որոշումը պաշտօնէից

վիճակն ըստ մասին բարեւթելու համար :
25 Հոկա. 1878

Մնամք խորին յարգանօք
ի Դիմաց Ազգ. Քաղ. Ժողովոյ
Ատենապետ Ատենապետ
Ա. ԱՆՆԱՆՆԱՆՆԻ ԳԵՂԷՍՅԱՆ

Ատենապետ փաշան յիշեցնելով թէ ժո-
ղովն արդէն այս խնդրովն զրաղած և Համա-
րակալութեան ղիւանէն ալ տեղեկագիր մը
եկած ու ներկայացած է ժողովոյ ներկայ
բացման Զ. նիստին մէջ, նոյն տեղեկագիրը
կարդացնել տալէ ետև, հրաւիրեց երեսփո-
խաններն՝ որ այս մասին թեր ու դէմ իրենց
կարծիքը յայտնեն :

ԳԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՅ — Կառաջարկեմ
որ Համարակալութեան ղիւանին կողմէ եկած
տեղեկագիրը քուէի դրուի :

ԻԻԹԻՒՃԵԱՆ Կ. ԷՅ — Կերկրորդեմ :

ՄԷԼԻԲԵԱՆ Գ. ԷՅ — Համարակալու-
թեան ղիւանի տեղեկագրին կարակացու-
թիւնը թէութեան մը ներքև է. ասով կըր-
նայ վարչութիւնը կրկին դժուարութեան
հանդիպիլ. ևս կառաջարկեմ որ այդ թէութիւնը
վերցնելով բացարձակապէս քուէար-
կուի խնդիրը :

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՅ — Կերկրորդեմ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ — Ի՞նչ է վարչութեան
առաջարկութիւնը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ — Կարծեմ դուք՝
Քաղ. ժողովոյ նամակը կարդացուած միջոցին
ներկայ չէիք. վարչութիւնը կառաջարկէ ըս-
տիպողարար՝ որ Պաշտօնէութեան տրուած
ամսաթոշակի գումարն ողջ թղթագրամի վե-
րածուի :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՅ — Արդեօք վարչու-
թիւնը ներկայ պաշտօնէից վճարած ամսական
գումարն ալ ցուցած է իր գրոյն մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այս տեղեկագրին մէջ ճշգրտած չէ այդ կէտը:

ՓԱՓԱՉԵԱՆ Ա. ԷՖ. — Ի՞նչ գիտնանք ուրեմն թէ ո՞րչափ կվճարուի ամիսը: Արդէն Ժողովս անցուկ դրամ 15250 զր. որոշած էր պաշտօնէից տրուելիք ամսական գումարն. անկէ ետք վարչութիւնը ցուցակ մը բերաւ, և կարծեմ հազար զր. վերադրելով, ամսական 16250 զր. զումար մը յատկացուց պաշտօնէից: Հիմա կուզեմ գիտնալ թէ ողջ թղթթաղբամբի վերածելու առաջարկութիւնը զոր վարչութիւնը կրերէ մեզ, այդ 16 հազարին համար է թէ Ժողովոյս որոշած 15250 զր. զումարին համար:

Իրաւ ցաւալի է որ այս տարուան պիււճէն դեռ չունինք ձեռքենինս. ներկայ վարչութեան վրայ չծանրանար այդ պակասութիւնը. իսկ նախորդն ալ չգիտեմ, ի՞նչու չբերաւ: Ներքին կանոնը կտրամադրէ որ պիւտնէն Ժողովի բացման Գ. կամ Գ. նիստին պատրաստ պիտի ըլլայ. այսօր Ժ. նիստը կընենք, տակաւին պիւտնէն շնորհյաջաւ Ժողովիս: Ամենացաւալին այն է որ Աղդ. Ժողովս իր հաստատութենէն ի վեր տակաւին ամբողջ պիւտնէ մը քուէարկած չէ. հազիւ թէ Ժողովս նախորդ տարուոյ պիւտնէին քրննութեան առթիւ կրցաւ որոշել պաշտօնէից թոշակի քանակութիւնն. և այդ կասկածաց ներքեւ մնացին վարչութիւնը և պաշտօնեայք և անկէ ի վեր է որ այդ յաւելման խնդիրն երևան ելած է: Արդ վարչութիւնն այդ յաւելումը առաջարկելով, նոր պարտք պիտի յաւելու սնտուկին վրայ, թէ սնտուկին վիճակը ներելուն համար այդ յաւելումը կառաջարկէ: Վարչութիւնն իրաւունք ունի ըսել թէ պաշտօնէութիւնը դո՞չ չէ, սակայն պիւտնէնիս ալ կենքէ՞ թէ ոչ. ասիկա ալ խընդիր մ'է որ պէտք է իմացուի. տպա թէ ոչ առանց սնտուկին վիճակը գիտնալու ինչպիսի կրնանք յաւելման որոշում տալ: Այո՞, ևս ալ կզգամ պաշտօնէից ներութիւնն այս տագնապալի ժամանակին մէջ. զիտէ Ժողովը թէ պաշտօնէից թոշակի քանակութեան առաջար-

կութիւնը ես եմ բերեր ժամանակին, սակայն պէտք է գիտնալ թէ երբ պաշտօնէից թոշակն 15250 զր. քուէարկեցինք՝ ոսկրի գինն 170—180 զր. էր, հիմա 350 զր. է, կրկնապատիկն ըսել է: Այո՞, պէտք է խցճու վարուիք այս մասին, բայց պէտք է ճշգրտ գիտնանք թէ ի՞նչ է սնտուկին վիճակը և ի՞նչ է վարչութեան ուղած յաւելումը. ես ցուցակ մը ունիմ, զոր կեդր. սնտուկին առած եմ, թէ և պաշտօնական կերպով չէ. այս ցուցակին կհասկնամ որ ամսէ ամիս 20 հազար երեք հարիւր զր. կվճարուի պաշտօնէից՝ Ս. Պատրիարքն ալ մէկ ասեղ ըլլալով. եթէ այս 20500 գումարն է որ վարչութիւնն ողջ թղթթաղբամբի վերածել կուզէ, ըսել է ամսական 8 հազար զր. յաւելուած մ'է առաջարկածը: Եթէ այս առաջարկութիւնն ընդունուի, այն ատեն 20500 զր. թղթթաղբամբն ողջ թղթթաղբամբի պիտի վերածուի, որ ըսել է ամսական 20500 զր. ողջ թղթթաղբամբ, կամ 28590 զր. անցուկ դրամ:

Ես կառաջարկեմ որ Ժողովն ճշգրտ որոշէ պաշտօնէից թոշակի քանակութիւնը, ըսել կուզեմ թուանշաններով ցուցնէ, ապագային սխալ մեկնութեանց տեղի չտալու համար. (հասնո-նէտն նշաններ) սակայն միանգամայն որոշենք որ վարչութիւնը այլ ևս չը յապաղեցնելով, պիւտնէն բերէ յաջորդ նիստին: Սա ալ կ'յաւելում թէ ես ցաւ կզգամ որ դաստիարակութեան համար նպաստի գումար մը չքուէարկած, պաշտօնէութեան թոշակի յաւելումը պիտի պարտաւորինք քուէարկել. ասի ցաւօք սրտի կըսեմ ու կանցնիմ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Փափագեան է ֆինանսի խօսքին մէջ խիստ օրինաւոր կէտեր կան: Սակայն ամեն բանէ առաջ շիտթութիւն մը կայ որ պէտք պարզուիւ Քաղ. Ժողովն իր նախկին մէջ պաշտօնէութեան յատկացեալ թոշակին համար 181 հազար այսքան զր. է կըսէ, մինչդեռ փափագեան է ֆինանսի Պատրիարքարանի մէջ ամսէ ամիս վճարուած ամսականը 20500 զր. է կըսէ, որոյ տարեկան գումարը բաւական կտարբերի Քաղ. Ժողովոյ ցոյց տուած գումարէն: Կրաւորեմ

Քաղ. Ժողովոյ ատենապետ է ֆինանսի՝ որ բարեհաճի բացատրութիւն տալ մեզ այս մասին:

ՍՏԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. — Քաղ. Ժողովն՝ որ նոր է, թէ և կուզէր այս տարուան պիււճէն իր ձեռքն ունենալ և ճիշդ տեղեկութիւններ տալ, բայց զժրագործարար չկրցաւ ցարդ ձեռք բերել. Առ այժմ մեր ստիպողական առաջարկութիւնն է 100ին 50 յաւելում մ'ընել պաշտօնէութեան թոշակին վրայ, մէկ մասին համար միայն: Երբ մտտերս պիւտնէն բերինք, այն ատեն ձեր ուղած գոհացուցիչ բացատրութիւններն ալ կ'յուշանք որ կարող կըլլանք տալ, որովհետեւ պաշտօնեայ ալ պակաս է, զոր պէտք պիտի ըլլայ աւելցնել: Իսկ Փափագեան է ֆինանսի ըսած ամսական 20 հազար 500 զր. զումարը կարծեմ ամբողջ պաշտօնէութեան համար է, Արքայական Պատրիարք Հօր թոշակն ալ մէջն ըլլալով. սակայն Նորին Արքայութիւնն իր մասին յաւելում կընդունի՞ թէ ոչ, չգիտենք. մեր առաջարկութիւնն է միայն տարեկան 184 հազար այսքան զր. թոշակաց գումարն ողջ թղթթաղբամբի վերածել որոյ մէջ չկայ Արքայական Պատրիարքի ամսականը:

ՊԵՏԼԻԻՃԵԱՆ Ա. ԷՖ. — (Անգամ Քաղ. Ժողովն) Պիւտնէին յապաղումը Տնտես. Խորհրդոյ և Ելում. Հոգարարձութեան անհամաձայնութենէն յառաջ եկած է. հիմայ վերցած է այս անհամաձայնութիւնն. ուստի ի մօտոյ կրնանք պիւտնէն բերել:

ԱԻԲՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Արդէն այս Ժողովին մէջ որոշուած էր պաշտօնէութեան զրուելիք թոշակին գումարը. նախորդ վարչութիւնն այդ գումարը յաւելումը մը բաշխելով տեղեկագիր բերած էր հոս, որ լուրեւայն հաւանութիւն գտած է Ժողովն. հիմա եղած խնդիրը տրուած գումարին 100ին 50 յաւելում մ'է, այս մասին հարկ չկայ երկարօրէն խօսելու. եթէ վարչութիւնը կըրնայ ըսել որ սնտուկին վիճակը կենքէ, անմիջապէս քուէարկենք լիննայ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կառաջարկեմ որ այդ 100ին 50 յաւելումն որոշուի լիննայ:

ՄԷՆԵՏԻՄ—ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Գումարը ճշգրտու հարկ չեմ տեսներ եթէ պաշտօնէութեան բոլորին համար որոշում պիտի ըլլայ. Փափագեան է ֆինանսի ձեռքն եղած ցուցակը 20 հազար 500 զր. համար է, որուն մէջն է նաև Ս. Պատրիարք Հօր ամսականը, մինչդեռ վարչութեան եկած առաջարկութիւնը պաշտօնէութեան մէկ մասին համար է. եթէ խնդիրն պաշտօնէից ամսականն ողջ թղթթաղբամբի վճարուելուն վրայ է, բացառութիւն չըլլար. ուրիշ բան է թէ որ Ս. Պատրիարքը կընդէ իր ամսականը: Ուստի մեք պէտք է ամենուն համար քուէարկենք և արտօնութիւն տանք վարչութեան՝ որ պաշտօնէութեան սահմանեալ թոշակաց գումարն ողջ թղթթաղբամբ վճարէ: Այն ատեն վարչութիւնը սա դիւրութիւնն ալ կուեննայ, որ եթէ պաշտօնէից մէջն յաւելումն չընդունող գանուի, վարչութիւնը կրնայ յաւելուել մասն միւսներուն բաժնել ըստ պիտոյից:

ԲՅԱԿՍԻՒՆ ԶՍՅՆԵՐ. — Այո՞, այո՞:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը տեսնեմ որ Ժողովն ընդհանրապէս ընդդիմութիւն չընէր վարչութեան առաջարկութեանը. միայն թէ յայտնուած կարծիքներուն մէջ տարբերութիւններ կան. մինչդեռ վարչութիւնն որոշ թիւ մը կցուցնէ և կառաջարկէ որ տարեկան 184 հազար այսքան զր. վրայ 100ին 50 յաւելում ըլլայ, թղթթաղբամբն ողջ գնով վճարելով պաշտօնակալաց, ոմանք կառաջարկեմ թէ ոչ այդ գումարին այլ Պատրիարքարանի ամբողջ ամսականին այսինքն 20500 զր. վրայ ըլլայ այս յաւելումը: Առաջարկող կայ նաև թէ վարչութիւնն արտօնութիւնն ունենայ այդ յաւելումն ընել եթէ Աղդ. սնտուկին վիճակը ներէ. ըսող ալ կայ որ վարչութիւնն ազատ ըլլալու է յիշեալ յաւելումն չընդունող պաշտօնէից բաժինը միւսներուն բաժնել ըստ արժանւոյն: Քուէն պիտի որոշէ ասոնց ո՞րը ընդունելի ըլլալն:

Չայս ըսելով՝ Ատենայետ փաշան քուէի դրաւ մի առ մի յիշեալ առաջարկութիւններն ու բարեփոխութիւններն և յողովն միաձայն ընդունեց :

« Արտօնութիւն տալ Վարչութեան՝ Պատրիարքարանի մէջ վճարուած ամսուական գումար 20500 ին վրայ հարկերն երսուն յաւելում ընել, թղթադրամն ողջ գնով վճարելով պաշտօնակալաց » :

ԴԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Այս խնդրոյն ուրիշ մէկ կէտը կայ՝ որ բացը մնացած է. այն ալ պէտք է որոշել. զիտէք սր սակէ առաջ յողովոյս պաշտօնէութեան թոշակին համար ըրած զեղջն առժամանակեայ էր. հիմայ քանի որ Վարչութեան առաջարկած յաւելումն ընդունուեցաւ այս յաւելման գործադրութիւնը Մայիս մէկէն պէտք է ըլլայ :

ՉԱՅՆԵՐ — Ո՛չ, ո՛չ. այսօրու ընէ պէտք է գործադրել :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քրիստոստուր է՝ զի և տին խնդրոյն յարակից ուրիշ մէկ կէտը կ'ըլլանէ. Քաղ. յողովոյ առաջարկութեան մէջ այս կէտը պարզուած չէ. արդ եօք Քաղ յողովն ըսելիք մ'ունի՞ր այս մասին :

ԱՏԻՄԱՐԱՃԵԱՆ Գ. ԷՖ. (Առէնադէր Քաղ յողովոյ)՝ Նախորդ Քաղ. յողովն ինչպէս որ առաջարկած է, մեք ալ նոյնք կրկնած եմք :

Այս պահուն Ատենայետ փաշան վերջտաին կարգաց Քաղ. յողովոյ առաջարկութիւնը և յետ այնորիկ կարգաց նաև նախորդ Քաղ. յողովոյ տեղեկագիրն ի մասին պաշտօնէութեան խնդրոյն՝ որ արձանագրուած է յողովոյ նախորդ բացման յի. նիստի տախտակագրութեան թէլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կը աեսնէք որ նախորդ Քաղ. յողովոյ տեղեկագիրը զեղջումն եղած թուականէն սկսեալ յաւելման գործ-

ծադրութիւնը կ'սկսուի. այսինքն՝ 1877 Նոյեմբերի մէկէն. եթէ այս խնդիրը յուզելու ըլլանք՝ տարուան մը խնդիր կ'յարուցանեմք : Գիւանը լուսադոյն կը համարի այս կէտը ձեռքէլ Քաղ. յողովոյ, որ եթէ ինք պէտք տեսնէ, պատճառներովը հանդերձ նոր տեղեկագիր մը բերէ, և բոս այնմ յողովը լուսարանուելով պէտք եղած որոշումն ընէ այս մասին :

ԲԱԶԱՄԱՓԻԻ ԶԱՅՆԵՐ — Այո՛, այո՛ :

Գիւանին այս առաջարկութիւնն առանց զիտօգութեան ընդունուի՞նք յողովն :

Բ.

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԿՈՒՅ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՅ ԱԶԳ. ԵՐԵՍ. ՊԵԿԵԱՆ ԷՖԷՆՏԻԻ ՄԱՍԻՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այժմ կանցնինք երկրորդ խնդրոյն, այն է՝ Պէկեան էֆէնտի մասին երկու երեսփոխանաց ըրած առաջարկութեան, որուն կ'վերաբերի Տէր Մատթէոս Եպիսկոպոսի այն նամակն ալ, զոր յիշ մ'առաջ յիշեցի. ուստի նախ՝ նոյն նամակը պէտք է կարդանք :

Չայս ըսելով առենայետ փաշան խօսք տուաւ ատենագրար էֆէնտիին, որ կարգաց յետագայ նակակը .

Վսեմաշուք Ատենայետ փաշա Աղգային ժողովոյ

Մտիպողական հարկէ մը պարտաւորեալ Աղգային ժողովոյ այսօրեայ նիստին չարտի կրնամ ներկայ գտնուիլ. կը խնդրեմ սակայն որ Պէկեան էֆէնտիի ՚կատմամբ երկու երեսփոխանաց առա-

ջարկութեան մասին, որ այսօրուան խնդրոց առաջինն է, հետեւեալ խնդրախառն առաջարկս եթէ կարելի է, բարեհաճիք ներկայացնել Աղգային ժողովոյն :

Տեա՛րք Երեսփոխանք

Ստոյգ է՝ որ Պէկեան էֆէնտի քըն. նազատական ձեռով մը պարզապէս ամբաստանեց զՍրբազան Պատրիարք Հայրն և նորա գործակից Եպիսկոպոսունքը խարուելով է՛րէն՝ եղեր են ըսելով անպատուեց :

Ստոյգ է՝ որ Պէկեան էֆէնտի իր թղթերը նախաքննիչ յանձնախմբին ներկայացնելու կրկին որոշմանց դիմագրելով հետեւեց Աղգային ժողովին :

Ստոյգ է՝ որ Պէկեան էֆէնտի իր յարուցած խնդրովը յողովրդեան գայթակղութեան և յուզման պատճառ եղաւ, և զծողովը ճնշման ենթարկելու վորձ փորձել յաւակնեցաւ :

Ստոյգ է՝ որ Պէկեան էֆէնտիի այս վարմունքը պարտաւորեց զՍրբազան Պատրիարքն որ Պէկեան էֆէնտիէն յանիրաւի ամբաստանուելուն դատաստանը լա յառութեամբ մը յատենի Աղգային ժողովոյ անմիջապէս և հրապարակաւ կատարել պահանջէ. և

Ստոյգ է՝ որ Պէկեան էֆէնտի քըն. նազատական ձեռի տակ ըրած ամբաստանութեանցն արժանի պատասխաններն ընդունելով պարտեալ գտաւ յատենի Աղգային ժողովոյ. ուստի և արժանի է այն պատժական տնօրէնութեանց, զորս Աղգային ժողովոյ ներքին կանոնադրութիւնը կտրամադրէ, ինչպէս առաջարկած են երկու երեսփոխան էֆէնտիներն :

Նկատելով՝ սակայն Տեա՛րք, թէ Պէկեան էֆէնտի (ինչպէս ինքն իր այս գործովքը հաւատեց) մեր Հայոց աղգին վիճակին տեղախան և քաղաքական հանգամանացն անդիտակ է :

Նկատելով՝ թէ Արևելեան խնդրոյն հանդուրդն և անոր լուծման բանալին իբախն ունեցող Եւրոպական մեծ տէրութեանց դիտմունքն ու նպատակը, և մասնաւորապէս Հայաստանի նկատմամբ նոցա ունեցած դիտաւորութիւնքը չէ իմաստասիրած երբէք :

Նկատելով՝ թէ Պէկեան էֆէնտի ամբողջ աղգին վստահութեամբ պատուեալ և Հայ-Կաթոլիկ երկու հոգիներէն Սրբազան Պատրիարք Հօր՝ նոյն խնդրոյն մէջ անեկուն արխութեամբ ի գործ դրած իմաստուն և շքեղահայեաց քաղաքականութիւնն և Պէրլինի աւագածողովէն ձեռք բերած Աղգին գոյութեան և ապագային երաշխաւորութեան անուս է, և անով աղգին շահածը չըմբռնէր :

Նկատելով՝ թէ Պէկեան էֆէնտիի սոյն այս արարքը խանգարեալ երևակոյութեան մ'արդիւնք է. և

Նկատելով վերջապէս թէ Պէկեան էֆէնտի սոյն խնդրոյն մէջ արգահատելի վիճակ մ'ունեցած է արդէն :

Հետեւապէս խնդրելով թէ՛ Նորին Բ. Սրբազնութենէն՝ Ամեն. Ս. Պատրիարք Հօրմէն և թէ՛ բոլոր երեսփոխան ընկերակիցներէս, կառաջարկեմ որ բաւական համարելով Պէկեան էֆէնտիի այս վիճակը՝ փոխանակ պատժական օրինաց գործադրութեան՝ է՛րէն ներողութեան քաղցր դատաստանաւ վերջացընելու շնորհ ընեն որ և շատ թուի ինձ

ի վճարումն անխորհուրդ ընթացից Պէկեան էֆէնտիի :

Մնամ աղօթարար

Վասն Ազգիս սիրելւոյ Ազգ. Երեսփ.

Մարտի 17 1878

40 նոյեմ. 1878

Երեսփարար

Նոր — Թաղ

Յետ ընթերցման ատենապետ փառանքալից ինձարանութեան ձեռնարկելէ առաջ, յիշեցնելով որ Տ. Բորէն Նար — Ա. Սրբազան նախորդ նստէն խօսք ուզած է այսօրուան համար ատենախօսել և բացատրութիւններ տալ Հայկական խնդրոյն մէջ Ազգային պատգամաւորութեան և ի մասնաւորի իր մասին եղած քննադատութեանց վրայ, անմիջապէս հրաւիրեց Նորին Արքայնութիւնն ի բեմ :

Տ. Բորէն Սրբազան .

Տեա՛րք Երեսփոխանք .

Պատմական մեծ դարագլխոյ մը հանդիսատես եղաւ աշխարհ . Արևելեան ազգաց բազմը զանգուեցաւ արցունքով և արիւնով, և որոշուեցաւ սրով և գրչով :

Այն երկրին նշանաւորացոյն տարբերէն մին էր Հայոց ազգը . դէպքերը չէին կարող նորա վրայէն սահիլ՝ առանց նորա վերայ ևս իւրեանց դրոշմը տպաւորելոյ :

Եղբերդութեան արիւնուշտ հանդէսին՝ ոչ միայն ներկայ գտնուեցաւ Հայը, այլ և իւր նուիրական հայրենիքը թատր ընտրուեցաւ այն ճապարհաց և աւերակաց՝ որոյ կարծես նախասահմանեալ է նա, իւր կարեւոր աշխարհագրական դրիւքը և քաղաքականութեան վը-

րայ ազդած հրապուճմար : Բազմահոյլ դարեր սուր և հուր կը բերեն ի Հայաստան, հզօր ազգեր կխուժեն, բանակներ կորոտան կգոռան, արեամբ կհերկեն, աւերակով կլեցնեն զայն : Բայց նա միշտ անմեռ կմնայ, նա միշտ կվերականգնի, նա միշտ կսպասէ՝ որ օր մը իւր դերը լեցընէ աշխարհի մէջ, այն դերը որ իրեն ճակատագրեալ է : Վերին Ասիոյ սէգ բարձրաւանդա՛կն տէր և Եփրատայ արգասարեր հովտին բնական ժառանգ՝ Հայը դեռ ևս ստանձնած, տակաւին կատարած չէ այն դերը զոր կսպասեն իրմէն քաղաքագիտութիւն և քաղաքակրթութիւն :

Ի՞նչ եղաւ Հայուն մասնակցութիւնը այն պատմական անցքերուն մէջ որոց առաջին արարուածին վարագոյրն է որ փակուեցաւ ի Պէրլին : Ի՞նչ շարժում ունեցաւ նա հասարակաց շարժմանը մէջ, և ի՞նչ արդիւնք ձեռք բերաւ : —

Չեր պատգամաւորը հարկ չունի բացատրելու զայդ այսօր : Ազգային ժողովոյդ Ամենապատիւ Ս. Նախագահը, որում ձեր անպայման վստահութիւնը նուիրեցիք այն ժամանակ, գործեց արժանի իւր պաշտօնին, ձեր վստահութեան և Ազգին սիրոյն և օգտին : Նա ի պաշտօնական համարատուութիւնն զոր ներկայացուցեր է ձեզ հանդիսապէս՝ ճարտար քաղաքագիտութեամբ բացատրած է զամենայն, և չէ թողած կէտ մը որ լուստարանուած չլինի հեռատես երեսփոխանի մը և քաղաքագէտ բարձունդութեան առջև :

Նոյն պահուն՝ ձեր Ազգային պատգամաւորք տակաւին յիւրոպա էին : Սյժմ վերադարձած՝ ուշի ուշով իմաստասիրե-

ցին այն վսեմախոհ ճառը, և չեն վարանիր բնաւ հռչակելու առաջին պատկառն ի ժողովոյդ՝ թէ ինչօժարութեամբ կստանձնեն Ամեն. Ս. Պատրիարք Հօր բացատրութեանց պատասխանատուութիւնը ի մասին պատգամաւորութեան :

Տեա՛րք Երեսփոխանք, այս առաջին անգամ Հայոց ազգը պատգամաւորութիւն զրկեց յիւրոպա : Կրօնական ազգի մը քաղաքական այդ անդրանիկ շարժումը՝ ունեցաւ իւր մեծ նշանակութիւնը քաղաքական աշխարհի առջև : Չեր պատգամաւորք ներկայացան իբրև կարևոր ազգի մը դեսպաններ : Կայսերք, նախարարք և իշխանք, միով բանիւ Եւրոպական դիւանագիտութիւնը, լուրջ ընդունելութիւն մը ըրաւ Հայոց պատգամաւորներուն : Անձնական արժանեաց պատիւը չէր որ կընծայուէր նոցա, այլ պատիւ էր այն Ազգին որ գիտցաւ ժամանակին հանգամանքներէն օգտուիլ, և Եւրոպիոյ ներկայացուցնել իւր պէտքերը, տենչը, իրաւունքը :

Այսօր սր մեր պաշտօնը լրացած է, Ամեն. Պաշտօնակիցս՝ Խրիմեան Սրբազան և Նս մեր շնորհակալութիւնը կայսանք այն վստահութեան համար սրով զմեզ մեծարեց ազգն Հայոց : Շնորհակալութիւն պէտք է հատուցանեմք նաև այն համակրութեան համար զոր գտանք այն ամեն տեղ ուր որ Հայ մը կար . սէր պատիւ, օժանդակութիւնք, քաջալեր, խորհուրդ չպակսեցան մեզմէ, և մեր ծանր պաշտօնը օգնեցին նուազ դժուարին գործելու : Արդարութեան պարտք մըն էր զոր հարկ կհամարիմ հոս ընել, ի պատիւ այն ազնուասիրտ Հայերուն, ցաւելով ընդ այն և եթ՝ որ նոցա համես-

տութիւնը չներեր նոցա ազգապատիւ անուանգ մի առ մի յիշատակելու :

Բայց և արդարութեան պարտք մը կհամարիմ նոյնպէս կատարել՝ ձեռքս խղճիս վրայ դրած վիայելու՝ թէ այն տաղնապալից պարագաներուն մէջ՝ ուրկէ անցանք, Պատրիարք և իւր աջակիցք, Եկեղեցականութիւն և աշխարհականութիւն, ինչպէս նաև ձեռ. Պատգամաւորութիւնը, շէ՛ք է՛ք ի՞նչ է՛ք եր, և բրին : Տեա՛րք, կատարեալ անձնախրութեամբ, կատարեալ արիւթեամբ և կատարեալ Ազգային քաղաքագիտութեամբ : Կատարեալ, այո՛, վասն զի չը թողին բան մը զոր պէտք էր մտածել՝ և մտածած չըլլան, չկայ բան մը զոր պէտք էր փորձել՝ և փորձած չըլլան, չկայ տեղ մը՝ յոր դիմել հարկ էր, և դիմած չըլլան : Համառօտ ատել՝ չկայ բան մը զոր պէտք էր գործել և գործած չըլլան :

Ես որ պատիւ ունեցայ Սրբազան պաշտօնակցիս հետ ի մօտոյ արքունական դահլիճները յսծիլ, զինել կարծիքները, բմբունել գիտատրուութիւնները, և Պէրլինի վեհաժողովոյն մերձենալով՝ շօշափել իմն այն հոյակապ դիւանագիտաց՝ սրոց ձեռքն էր աշխարհի բազմը՝ արևելեան աշխարհի վրայ ունեցած տրամադրութիւնքն և գաղափարները, կը հուատարմայնեմ զձեզ, Տեա՛րք Երեսփոխանք, որ այն պարագայից մէջ յորում գուճարեցաւ վեհաժողովը՝ և այն նպատակին առջև՝ զոր ինք իւր անձին գրած էր . — Եւրոպիոյ խաղաղութիւնը և երկու մեծ ինքնակալութեանց ներգաղնակութեան հաստատութիւնը . — այս պարագայից մէջ, կըսեմ, և կարելի չէր

ընդունիլ աւելի քան զոր ընդունեցանք: Ընդաց պատգամաւորութիւնը չէր կրնար դէպքերը յեզարջել, չէր կրնար փոփոխել իրաց հանգամանքները, ինչպէս չկրցին փոփոխել նոյն իսկ զօրաւոր պետութեանց դեսպանք և գիւանադէտք այն Արիստոքոսին մէջ:

Բայց և այնպէս առաջին անգամ ըլլալով՝ Հայուն անունը լոկ կրօնական կերպարանքը մերկանալով՝ քաղաքական կերպարանք մը կառնու, և միջազգային մեծ գաշնադրի մը մէջ միջազգային խընդիր մը կգառնայ Հս. յիսկան խնդիրը:

Փորձառու և ներհուն կենցաղագիտութիւնը պէտք է խոստովանի՝ որ անպարտատ ազգ մը որ իւր առաջին քայլն ըրաւ՝ «ա՛սչափ միայն կարելի էր շահիլ, և շահեցաւ»:

Այո՛, Տեարք, այս անգամ սերմի սերմանեցինք, տունկ մըն է զոր ձեռք բերինք. գիտէք բնութեան օրէնքը, կարելի չէ այսօր սերմանել և այսօր բաղձալի հունձքը վայելել: Եթէ կուզենք որ տունկը ի ծառ փոխակերպի, ծաղիկ ու պտուղ արդիւնաբերէ՝ մշակեմք զայն, օդնեմք ժամանակին, և ապահով ըլլանք որ օր մը պիտի վայելեմք մեր աշխատանայ արգասիքը: Բայց յիշեմք միանգամայն, որ ամենէն գեղեցիկ և յուսալից ծաղիկը՝ կիսամրի, կոբնայ անհող և արգէտ մշակին ձեռքը:

Մեծագոյն կենցաղագիտութիւնը՝ ժամանակին հանգամանքները ճանաչելն է, և դէպքերէն օգուտ քաղելով՝ ոսն տա ոսն յառաջ ընթանալն է: Այն ազգը միայն կվերականգնի՝ որ գիտէ թէ պէտք է խորհի շարժի, և գործէ աննըկուն յարասեւութեամբ գիմելով դէպ

ի նպատակն առաջադրեալ:

Մեր Հոյ եղբարք՝ որ այլուր, որք ի հեռուստ առաւել հանդարտ ոգւով, առաւել շրջահայեցութեամբ գիտեցին իրաց ընթացքը, ուրախ եղան ձեռք բերուած արդիւնքին վրայ, և խնդրեցին որ իւրեանց խնդակցութիւնը ներկայացնեմք ի Ձերդ տանն: Կարելի էր որ նոքա, կարելի էր որ ես՝ յուսոյինք թէ այս ատենին մէջ այսչափ ամիսներ գոհուն գոհունութեան, անվստահութեան, անգործութեան . . .

Ինչ մեծ ակնկալութիւններով վերադարձայ ես ի հայրենիս և ինչ գտայ, աւա՜ղ: Ես կարծէի թէ իմաստուն ժողովրդ պարագայից բռնութեան առջև իւր բոլոր ոյժն և ուշք ժողովելով, արդէն պատրաստած է իւր ապագային ծրարիրը, և անոր գործադրութեանը կղոհէ իւր անգին ժամերք: Ես կարծէի թէ գոնէ այսօր զգացած է Ազգային ժողովրդ իւր նուիրական սրտաքը և Սահմանադրութեան պտուղը պիտի սկսի վայելել տալ Ազգին:

Երբ առաջի քաղաքագէտ և յառաջագէտ՝ Եւրոպիոյ կպարծէր ձեր պատգամաւորք թէ Հայոց ազգը իբր քսան տարիէ ի վեր Սահմանադրական ազգ մըն է, և Արեւմտեան ազգաց զարմանքը կչարժէր, հարկ է ես խոստովանիմ՝ ձեր ատենը՝ թէ այսչափ ժամանակ դեռ բաւական չեղաւ զմեզ Սահմանադրական ընելու, և Սահմանադրութեան արժանի գործեր գործելու:

Ինչ օգուտ մեզի օրինաց գեղեցիկ դրութիւնը երբ չգիտնամք անոր օգուտը և շահը:

Մեր է ժողովոյ՝ կենսագրութեան

նչոնք ամուլ վիճարանութիւնքն են գորա յարացոյց, իրերամարտ մրցումներն են գորա փաստը:

Ազգ մը իւր ձեռքովն է որ կը դարձնէ իւր ճակատագիրը: Ազգը մեք կներկայացնեմք այսօր, Տեարք Երեսփոխանք, որովհետեւ մեզ հաւատացած է նա իւր ճակատագիրը: Այս դրութազգ ազգին յոյսերը ի դերեւ չհաննք: Յիշեմք թէ ինչ մեծ պատասխանատուութիւն ստացած եմք այն օրէն յորում իւրաքանչիւր ոք ի մէնջ այս ժողովոյ սրբավայրին սերմերէն ներս մտաւ, իւր հետը բերելով ազգին պատգամը, ազգին ցաւերը, ազգին ակնկալութիւնքը: Քանի՛ նիստ կրնամք համբել այնքան բաղմաթիւ նիստերուն մէջ՝ յորում ներքին խայտանօք մեր խիղճը վկայած ըլլայ թէ ազգային երեսփոխանի պարտականութիւննիս կատարած եմք անթերի, և ազգային մեծ և օգտաշահ խնդիր մը լուծած եմք:

Ազգային ժողովոյ պարտքն է աւագ աչօք քննել և տեսնել ժամանակը նկատելով որ յղի է նա՛ առ այն շարժել և պատրաստել զՀայութիւն: Չեր պարտքն է, Տեարք Երեսփոխանք, Ազգիս համար կենսական եղած խնդիրները առնուլ ի ձեռին, զանոնք նշանակել ձեր օրակարգին մէջ, անոնցմով զբաղիլ, զանոնք իմաստասիրել ուշիմ՝ շրջահայեցողութեամբ, և զանոնք վճռել որչափ որ կարելի է շուտով, վասն զի ժամանակը արագասահ կգլորի, և կմզէ գէպքերը շոգւոյ և ելեքարութեան հսկայաշարժ թեւերով:

Եւ որո՞նք են այն կենսական խնդիրները, Տեարք Երեսփոխանք: Արդէն

գիտէք զայն, բայց պարտք կհամարիմ և ես յիշատակել:

Ազգի մը վերաջինութեան հիմունքը երեք կէտերու մէջ են.

Ա. Մտաւորական զարգացումն.

Բ. Նիւթական բարգաւաճումն.

Գ. Քաղաքական ընթացք.

Այս վերջին կէտին վրայ՝ կըսեմ: Չկայ մէջերնէս մէկը՝ որ ինչ հետ համալիր չգտնուի թէ այն իմաստուն և ազգասէր Պատրիարքը որ այս դժուարին պարագայից մէջ եցոյց այնքան արիութիւն և քաղաքագիտութիւն, հարկ է որ շարունակէ ազգային նաւուն զեկավարութիւնը: Աւ այս պէտք է ժողովրդ կրկնէ իւր վստահութիւնը, և ապահով ըլլայ թէ նա զնաւն յանքոյթ նաւահանգիստ պիտի առաջնորդէ, պէտք է ժողովրդ տայ միանգամ Ս. Պատրիարք Հօր այն շարժման ազատութիւնը, առանց սրոյ կարելի չէ չմասնել ի դերեւ ազգային կարեւորագոյն շահերը, ինչպէս փորձով տեսած են այն ամեն յառաջագէտ ազգերը որ Սահմանադրութեան մէջ մեզ պէտք է օրինակ հանդիսանան:

Իսկ առջի երկու կէտերը՝ որ են «Մտաւորական զարգացումն», և «Նիւթական բարգաւաճումն», ազգային ամեն անհատի՛ ևս առաւել կարողներուն սրբազան պարտքն է իրենց գործունէութիւնը, եռանդը և կարողութիւնը նրուիրել առ այն, եթէ կուզեն ազգին կենդանութիւնը տեսնել:

Ուր երկու Հայ կայ՝ պէտք է այս երկու խնդիրներով զբաղի, և առ այն դարձնէ իւր միտքն և ջանքը: Ինչ ըսեմ Ազգային ժողովոյ համար, որոյ ամենէն նուիրական պարտքն է սոյն կե-

նաց և մահու խնդիրները քննել և լուծել, և դապագայն պատրաստել:

Այո՛, անհատական ջանքերը՝ մեր ազգին արդի վիճակին մէջ պէտք է իշխանութիւնը կանոնաւորէ, ցուցանելով այն շրջանակը ուր պէտք է շարժին, այն ուղղութիւնն՝ որ պէտք է ունենան, և այն նպատակը՝ յոր պէտք է ընթանան:

Ուրեմն իմաստնախոհ ժողովդ իւր ամենէն մեծ դրաղմունքն համարելու է մտածել, որոշել սոյն խնդիրները, և զօրացնել զկեդրոնական վարչութիւն, որ կարենայ իւր ձեռքն և գործունէութեան միջոցներովը անցեալէն աւելինը պատաւոր կերպով կատարել իւր սոյն մեծ պարտականութիւնը. վասն զի մեր ներքին քաղաքականութիւնը պէտք է հայթայթէ մեր վերածնութեան անմիջական պիտոյքը: Կհամարձակիմ ըսելու որ ժողովս բաւականէն շատ աւելի զքաղցեցաւ ընդհանուր քաղաքականութեան յեղյեղուկ հորիզոնին հետ: Պէտք է նա իւր բոլոր ուշադրութիւնը կեդրոնացընէ, — վասն զի և այդ իսկ է իւրն պաշտօն, — իւր ներքին աշխատութեան վերայ: Ընդհանուր քաղաքականութիւնը, պարագայից բերմունքը՝ ժամանակին կուգան բերել իրենց օժանդակութիւնը, ու փորձով իսկ տեսանք որ եթէ այդ վայրկեանը հասնի՝ թէ՛ ժողովոյս մէջ, և թէ՛ արտաքոյ՝ Ազգին ճակատագրին վերայ լուրջ խորհողներ չեն պակասիր բարեբաղդարար որ անկէ դիտնան օգտեցընել զԱզգը: Մեր ներքին քաղաքագիտութիւնն ըլլայ մեր մտաւորական և նիւթական բարգաւաճումն:

Տեա՛րք երեսփոխանք, մեր անգոր-

ծութեան, մեր անվտանգութեանց, մեր ճակատագրական վհատութեան տխուր հետեանքները կրեցինք ցարդ: Բաւական է ինչ որ տուժեց ազգը: Քրէական յանցանք է այսուհետեւ մեր չգործելը: Պատմութեան առջև պատասխանատուութիւննիս այնչափ առաւել ծանր պիտի ըլլայ ո՛րչափ առաւել ժամանակիս նշանակութիւնը և ընձեռած օգուտն չը հասկնամք, և չփութամք շահուիլ ի՛րաց նպատաւոր հանգամանքներէն: Չայս քրին և կընեն նոյն իսկ մեր չրջակայ ազգաց իմաստնագոյնքը: Չայս պարտական եմք ընել և մեք:

Այն ատեն, և այն ատեն միայն կը լուծուի Հայկական խնդիրը:

Կխնդրեմ ի Բարձրելոյն՝ որ մեր նախնեաց ազգանուէր ոգին ներշնչէ ի մեզ, անոնց՝ որ մեզի չափ ծանր պարագայներու մէջ գտնուեցան, բայց դիտցան ազգին կենդանութեան նուիրել իրենց բովանդակ ուժն, սիրտը, արիւնը:

Նոյն սիրտը, նոյն եռանդուն գործունէութիւնը նուիրեմք և մեք Հայրենեաց, և Աստուած օրհնէ մեր ջանքն և արդիւնաւորէ մեր ազգանուէր աշխատութիւնները ի ներկայն և յապագային:

Տեա՛րք երեսփոխանք, կեդրակացընեմ՝ առաջարկելով, նախ՝ «Բաղաքական կէտք» յանձնել Ամեն Ս. Պատրիարք Հօր որ սկսած ընթացքը յառաջ վարէ, վայելելով մեր կատարեալ վստահութիւնը: Բ. Նորոգ եռանդեամբ զբաղիլ այսուհետեւ մեր երեսփոխանական պաշտօնին գործադրութեանը, մեր օրակարգին գլուխ դնելով սոյն երկու կենսաւէտ խնդիրները. «Մտաւորական զարգացու-

մըն» և նիւթական բարգաւաճումն» Ազգիս Հայոց:

Տեա՛րք երեսփոխանք, ձե՛ր ձեռքն է Հայոց ազգին կեանքն ու մահը — Ընտրեցէ՛ք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խորէն Արքայանի ճառն թէ և մեր Օրակարգի խնդրոյն ուղղակի չպատկանիր, սակայն կարեւոր կէտեր և օգտակար խրատներ պարունակելուն համար հաճութեամբ լսեցինք ամենքս: Բայց ըստիս պէտք չէ միայն լսել և անցնիլ, զի ի վերջոյ առաջարկութիւններ կպարունակէ, առաջարկութիւնք որ ծանրակշիռ են, պարտաւոր ենք նկատողութեան առնուլ և որոշում տալ անոնց վրայ: Ուստի եթէ ժողովը կը հաճի, խնդրոց կարգն անցընելը Արքայանի առաջարկութիւնները նախաքննիչ դիւանի տեղեկագրութեան յանձնելէ ետեւ: Կրնայ Պէկեան և Ֆինտիի գատապարտութեան խընդրոյն վրայ հրաւիրել ձեր ուշադրութիւնը. այս կէտին վրայ դիւանը խօսք ուղղներուն պատրաստ է կարգաւ խօսք տալ:

ԵՌԻՍՈՒՅԵՆ Տ. ԷՅ. — Ներեցէ՛ք ինձ, Ատենապետ փաշա, պատիկ դիտողութիւն մը ընել: Խորէն Արքայանի ճառին համար կըսէք թէ խնդրոց կարգն անցընել պէտք է. ես կըսեմ թէ Նորին Արքայանութիւնն ըստ որում բաւական ժամանակէ ի վեր մեր նիւտերուն ներկայ չէր, չգիտէ թէ իր ճառին եղբակացութիւնը բոլորովին համաձայն է ժողովոյս մինչև ցարդ բունած ընթացքին. ես իբր նոր առաջարկութիւն չեմ տեսներ, այլ աւելի հաստատութիւն մը կնկատեմ. արդեօք հարկ կայ խնդրոց կարգն անցնելու:

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԱՋԱՆ. — Ես նոր առաջարկութիւն բերելու անձնապատուութիւնը չունիմ. այլ ազգին օգուտը միայն կ'ուսածեմ: Ես ցաւ կզգամ որ դատարարական կարեւոր խնդիրն անլոյծ կ'մնայ տակաւին. ցաւ կզգամ որ այսպիսի կենսական

խնդիրներ բարձի թողի ինին և Պէկեան էֆէնտի մը խնդիր գրաւէ ձեր միտքն ու ուշադրութիւնը: Կը խնդրեմ որ շնչին խընդիրներու շրջանք մեր կեանքը: Մեր Արքայան եղբայրներէն Մատթէոս Եպիսկոպոս սիրուն առաջարկութիւն մը կընէ. ես անոր նամակին ամեն խօսքերուն չձայնակցելով միայն կը կրկնեմ այն առաջարկութիւնն՝ որ է ներել և անտես առնել ինչ որ եղած և խօսուած է կրից ոգւով. եթէ խօսուածները փաստերու լոյս չի մնալ էին, այդ փաստերը ցրած են արդէն Ս. Պատրիարք Հօր սուած հօր պատասխաններովը. ձեր պատգամաւորն արդէն հանգարտ խղճմտանքով հաստատեց ձեզ թէ կատանձնէ Ս. Պատրիարք Հօր բոլոր յայտարարութիւնները Հայկական խնդրոյ մասին: Ինչ կ'մնայ ուրեմն ընել. միթէ անցեալ խնդիրներով ժամանակ կորսնցնել և դատապարտեմ զքե՛ր՝ որ ազատ խօսեր է, չսփէն դուրս ելեր է. ո՛չ ո՛չ: Կը խնդրեմ, Ատենապետ փաշա, որ իմ առաջարկութիւնս ներկայացնէք պատկառելի ժողովոյ ուշադրութեան. այս է. թողունք անցեալը, մտանա՛ք այն ամենն՝ որ կրից արդիւնք են, և անցնելը յառաջանալ այն ասպարէզին մէջ որ պէտք և պատիւ է մեզ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խորէն Արքայանին ճառը Հայկական խնդրոյ և իր պատգամաւորութեան պաշտանի մասին բացատրութիւններով սկսաւ և հօգեչահ խրատներ ալ յաւելցուց. այս մասին շնորհակալ եմք իրմէն: Եթէ սոյն կէտին վրայ կենար, ըսելիք մը չունէինք. բայց ըստ որում եղբակացութեամբ և առաջարկութեամբ վերջացուց, ըսելով թէ՛ պէ՛տք է Ս. Պատրիարք Հօր յանձնարարել ազգային խնդրոյ մասին սկսած գործը շարունակել և ասի բաւական ծանրալուծութիւն ունի, անոր համար ըսի թէ պէտք է խնդրոց կարգն անցընել վիճարանութեան ենթարկելու և ելք մը տալու համար: Մեր բարեկամն՝ Երեսուֆեան և Ֆինտին ուղեց նախաձեռնով մը վերջացնել այս կէտը: Խորէն Արքայան անոր պատասխանելու առ-

թիւ Պէկեան Էֆէնտիի խնդրոյն վրայ դարձուց իր խօսքը . մինչդեռ ես կկարծէի թէ ինք ալ պիտի օջապէս ինձ իր ճասին խնդրոց կարգն անցնելու համար բրած առաջարկութեանս ձայնակցելով : Այժմ պէտք է ինձ հարցնել խորէն Սրբազանին . կհամո՞թէ ոչ իր ճասին եզրակացութիւնն խնդրոց կարգըն անցնել . եթէ չհաճիր և ետ կառնու , այն ատեն գործը կը պարզուի : Կըմնայ Պէկեան Էֆէնտիի մասին իր բրած ներման առաջարկութիւնը . այժալ խնդրոյն վիճարանութեան միջոցին կրնայ ուշադրութեան առնուի :

ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Այո՛ , կը փափարիմ որ Ժողովն ուշադրութեան առնու առաջարկութիւններս :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ. — Սալ հասկացողութիւն մը կայ , զոր պէտք է ուղղել . եթէ Եւսուֆեան Էֆէնտի խորէն Սրբազանի ճասին համար շտաբ թէ նոր բան մը չստորանակեր , անոր ոգւոյն համար էր : Եւ արդարև խորէն Սրբազանի ճառը կհաստատէ թէ Ամեն Ս. Պատրիարք Հայրը և ազգային պատգամաւորներն ամենայն ուղղութեամբ կատարեր են իրենց պաշտօնը Հայկական խնդրոց մէջ . խորէն Սրբազանի այս յտարարութիւնը խնդրոյն վրայ յարուցուած կատկածներուն զէմ բողոք մ'է . եւ ի. բերած եզրակացութիւնն երկու առաջարկութիւն կպարունակէ . մէկն այն է որ արտօնութիւն տրուի Ս. Պատրիարք Հօր՝ իր սկզբած գործը շարունակելու , և երկրորդ՝ Ժողովս ազգին մտաւորական զարգացման և նիւթական բարգաւաճման զբաղի : Ես կըրնամ հաստատել որ Ժողովս այս վերջին խնդիրներովն զբաղած է արդէն . ուրիշ ատեն ալ ըսած եմ թէ Ժողովս պիտի մը շուննցած՝ հարստահարութեան մեծ խնդրովն ըզբաղած և խիստ արթուն պատուած է այս մասին . ինչ է ազգին մտաւորական զարգացման և նիւթական բարգաւաճման գրելաւոր արդեւքը . միթէ մեզի պէս հարստահարեալ ժողովուրդ մը՝ կրնայ նիւթապէս և մտաւորապէս ըստ արժանւոյն յառաջ երթալ . ահա ազգին յառաջ շնորթալուն գրելաւոր պատճառը հարստահարութիւնը են . Ժողովս այս մասին խիստ արթուն գտնուած է և 1870 թուականին ի վեր շարունակ ըզբաղած է սոյն կենսական խնդրով : Թէ որ զարմանն մեր ձեռքն ըլլար , ժողովուրդը հարստահարութեանց զէմ պիտի չհամար և ո՛չ մէկերն իր կեղծ ջրակ տալ . որով ժողովուրդն իր բազմին ակըր կըլլար . սակայն մեր ձեռքը չէ այս . . . :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — (Ընդհանր) կաշաշեմ , ի խնդիր դարձէք :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ. — Խորէն Սրբազան կհրաւիրէ զմեզ՝ որ փուճ խնդիրներով ժամանակ չանցնենք : Իրա՛ւ որ է երբեմն փուճ խնդիրներով զբաղած եմք , բայց ստանցմովալ զբաղած ժամանակնս՝ հարստահարութեան խնդիրն երբէք մոռցած չեմք , և երբէք բարձր թողի ըրած չեմք զայն . Պատրիարք և Ժողով մեծ խնայարկութեամբ յանձնեմք են այս խնդիրը . Ժողովս կրնայ անով պարծիլ և իր նախագահն անոր փառքը ժառանգել : Այսպէս կըմտնեմ ես խորէն Սրբազանի երկու առաջարկութեանց վերջնոյն ոգին որոյ հիմն է Ա. առաջարկութիւնը : Ուստի կուզամ խորէն Սրբազանի Ա. առաջարկութեան որ է Ս. Պատրիարք Հօր արտօնութիւն տալ իր սկսած ազգային մեծ գումարը շարունակելու : Ասկէ յառաջ Ս. Պատրիարքին յանձնած էինք որ Պէրլինի դաշնագրին ՅԷ երրորդ յօդուածին գործադրութիւնը սրահանջէ . ասի էական կէտ մ'է , որ յանձնուած է Ժողովս Ս. Պատրիարքին և Վարչութեան միաբանորէն գործելու : Այժմ խորէն Սրբազան կառաջարկէ որ Ս. Պատրիարքը սկսած գործը շարունակէ . ո՛ր գործն է այն՝ զիտեք արդէն . Հայաստանի ինքնօրինութեան խնդիրն է : Երբ Պէրլինի Քօնկրէն շընդունեցաւ ազգին այդ խնդիրը կստարել , Սրբազան Պատրիարքը ինչ ոչ կստաններուն և ազ-

գային պատգամաւորք ի Պէրլին լիազօրաց բողոքեցին . այդ բողոքն յանուն ազգին ըրին , սրով կհաստատէ թէ , ազգն իր խնդրէն ետ կեցած չէ : Թերևս խորէն Սրբազանի գիտնալ ուզածն այս է թէ արդեօք Ս. Պատրիարքն այս խնդիրը դարձեալ կշարունակէ՞ թէ չէ : Յայտնի է թէ կթէ պարագաներն օգնեն , Ս. Պատրիարքը դարձեալ պիտի շարունակէ նոյն խնդիրը . և երբ Պէրլինի դաշնագրին ՅԷ երրորդ յօդուածին գործադրութիւնը կզահանջեմք , բնաւ դադարած չենք ըլլար ինքնօրինութեան սրահանջումն : Այս մտքը կրնանք ընդունիլ խորէն Սրբազանի այդ առաջարկութիւնը . և հարկ չկայ զանի օրակարգն անցնել . զի այդ առաջարկութիւնը ոչ նոր է և ոչ ալ մեզ անձանթ բան :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — (Գրեթէ Ընդհանր) կաշաշեմ , ի խնդիր վերադարձէք : Խորէն Սրբազան իր ատենախօսութիւնն առաջարկութեամբ մը վերջացուց . սոյն առաջարկութիւնը կամ նախաքննութեան յղելու և կամ Եւսուֆեան Էֆէնտիի ըսածին պէս նախաձեռնով վերջացնելու վրայ է խնդիրը : Այս մասին ինչ է կարծիքնիդ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ. — Նախաձեռնով վերջնելն ընդունիլ կամ մերժել ըսել է . երկուքն ալ կրնայ ըլլալ . իմ առաջարկութիւնս զայն ընդունիլ է , ոչ թէ իրրև նոր խնդիր այլ իրրև արդէն ընդունուած խնդիր , իրրև նոր բարեփոխութիւն :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Խնդիրը դեռ վիճարանութեան նիւթարկուած չէ . բարեփոխութիւն առաջարկելու տեղի չկայ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ. — Նախաձեռնով միայն խնդիր մը վերջնելու համար չէ , որ կգործածուի , այլ և զայն ընդունելու համար ալ . ուստի կընդունիմք կանցնիմք , արդէն գիտցած խնդիրնիս է :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Ներեցէք , այն բանն

որ վիճարանութեան չենթարկուած ընդունիմք կամ մերժենք կըսուի , նախաձեռն է : Խորէն Սրբազանի յարուցած խնդիրն արժէք մ'ունի եղեր , որ տակաւին վիճարանութեան չենթարկուած այսբան խօսքերու տեղի կը տրուի . և որովհետեւ դեռ խակ է , պէտք է նախաքննութեան յղենք զայն և խնդրոց կարգին մէջ դնանքնել , որպէս զի ժամանակին վիճարանութեան ներքև դնելու կարողանանք : Ուստի կանցնիմ ուղղակի մեր Օրակարգի խնդրոյն և կհրաւիրեմ Պէկեան Էֆէնտիի մասին խօսք ուղղութեան իրենց կարծիքը յայտնել . Խորէն Սրբազան այս մասին էր կարծիքը յայտնեց , նոյնպէս Մատթէոս Սրբազան գրով հաղորդած է . ուրիշ խօսք ուղղ կայ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ ԷՖ. — Խորէն Սրբազանի առաջարկութիւնն ինչ պիտի ըլլայ :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Խնդրոց կարգը պիտի անցնի յետ նախաքննութեան :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ ԷՖ. — Փափաղեան է՝ Էֆէնտին ալ նոյնն ըսու . ինչ որ ես ըսի խորէն Սրբազանի առաջարկութեան մասին , նա քիչ մ'աւելի քան զիս ընդարձակորէն խօսելով . ուստի խնդրոց կարգն անցնելու բան չէ . նախաձեռնով ընդունիմք ու անցնիմք :

ՍՏԵՆԱՊԵՏ ՓՄՇԱ. — Տեսնենք , եթէ ձեր ըսածին համեմատ , խորէն Սրբազանի առաջարկութիւնն արդէն վճռուած լինցած է Ժողովոյս կողմէն , նախաձեռնով կանցնիմք վերայն :

(Թե՛ կարողայ խորէն Սրբազանէ ճառն Էդուարդեան Ս. Տոբ) Հիմա կհարցնեմ . միթէ Ժողովն այս Ա. մասին վրայ արդէն վճիռ մը ունի՞ :

ԵՈՒՍՈՒՑԵԱՆ Տ ԷՖ. — Այո՛ , ունի . բայց չեմ յիշեր՝ ո՞ր նիստին մէջ . թերևս զըստնս փակ նիստին մէջ է այն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դռնփակ նիստին ես կ'Պոչիս չէի . բայց Ատենադպիր էֆէնտին տեսէք ի՞նչ կըսէ . դռնփակ նիստին որոշումը Պէրլինի դաշնագրին ՅԱԵրրդ յօդուածին գործադրութիւնը պահանջելու համար է , կըսէ . մինչդեռ Խորէն Արքայանի առաջարկութիւնն ուրիշ բան է . Խորէն Արքայան կառավարկէ որ Ս. Պատրիարքն իր սկսած գործը շարունակէ : Ուստի քանի որ Խորէն Արքայանի ըսածը դռնփակ նիստին մէջ որոշուածէն տարբեր բան է և բնաւ չջօշափէր զայն , պէտք է որ խնդրոց կարգը մտնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Դռնփակ նիստին օրն ըրած որոշումնիս էր արտօնութիւն տալ Ս. Պատրիարքին և վարչութեան զիմելու ուր որ անկ է :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Այդ որոշումնիդ ՅԱԵրրդ յօդուածին գործադրութիւնը պահանջելու համար է , և պայման կըդնէ Արքայանին Քաղաքական Ժողովոյ գործակցութեամբ գործել . Խորէն Արքայանին առաջարկն ուրիշ բան է . նա սկսուած գործին շարունակութիւնը կխնդրէ և առանց վերոյիշեալ պայման յիշելու :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Խորէն Արքայանի այդ առաջարկութեան հետևութիւնն ի՞նչ է . ի՞նչ ըսել կուզէ կոր :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է թէ տակաւին չէք հասկցեր առաջարկութեան ի՞նչ ըսել ըլլալը . ուրեմն ձգեցէք որ խնդրոց կարգը մտնայ և տեղեկագիր մը առնուելով վիճարանութիւն ըլլայ և ամեն մարդ հասկընայ :

ՓԱՓԱՅԵԱՆ Ս. ԷՖ. — Մեք վարչական ինքնօրինակութիւն խնդրած ենք . այս է մեր ազգային դատն , արդեօք ետ կեցե՞ր ենք այս գատէն . հարցուցէ՞ք կա՞յ մեր մէջ մէկն որ ըսէ թէ մերժած ենք . ուրիշ բան է , եթէ այսօր այդ չպիտի պահանջենք , այլ

Պէրլինի դաշնագրին ՅԱԵրրդ յօդուածին գործադրութիւնը միայն , Հարցնենք Ս. Պատրիարք Հօր թէ ի՞նչպէս հասկցած է այս կէտը . Հայաստանի ինքնօրինակութեան դատը կը շարունակէ՞ թէ ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ այդ կհարցնեմ . վարչական ինքնօրինակութեան դատը շարունակել որոշուած է . եթէ որոշուած ըլլալը ապացուցընէք , վէճը կդադրի , զի այդ է Խորէն Արքայանի առաջարկը . ապա թէ ոչ առանց վիճարանութեան հասկնալով որոշում չըլլար :

ԶԱՅՆԵՐ. — Քուէի դրէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Անտարակոյս քուէի պիտի դնեմ , բայց ի՞նչ :

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Ես կարծեմ թէ Փափազեան էֆէնտի կսխալի այս վերջին կէտին մէջ , երբ կըսէ թէ Ս. Պատրիարքին հարցուի՝ Հայաստանի ինքնօրինակութեան խնդիրը կշարունակէ թէ չէ . ես կըսեմ թէ Խորէն Արքայանի առաջարկութեան համաձայն հարկ չէ վերստին արտօնել զԱրքայան Պատրիարքն . արդէն Ժողովն երկիցս յանձնարարութիւն ըրած է Ս. Պատրիարքին . կուզէք Հայկական խնդրոյն համար հասկըցէք , կուզէք ՅԱԵրրդ յօդուածին գործադրութեան համար . ես այս մտօք ըմբռնած եմ Խորէն Արքայանի առաջարկութիւնը . եթէ ասկէց դուրս է ուրիշի հասկցածը կամ Փափազեան էֆէնտի տուած մեկնութեան մտօք է , այն ատեն խնդիրը կփոխուի : Ուստի այս տեսութեամբ կը կրկնեմ թէ ըստ իս Խորէն Արքայանի առաջարկն խնդրոց կարգն անցնելու հարկ չկայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կարծեմ բաւական է այս կէտին վրայ եղած վիճարանութիւնը . ուստի այս միջանկեալ գործողութիւնը կնքելով քուէի պիտի դնեմ . այսինքն Խորէն Արքայանի առաջարկութեան այն

մասն՝ որ է « Խնդրել Ս. Պատրիարքէն որ շարունակէ իր սկսած գործը » :

Ո՛վ որ կընդունի որ այս առաջարկն նախաքննութեան յղուի և խնդրոց կարգն անցնի և իր կարգին վիճարանութեան ենթարկուելով վճիռ մ'ընդունի՝ ձեռքը վեր վերցնել շնորհ ընէ :

Միայն մէկ ձեռք ամբարձաւ :

Ով որ չընդունի որ նախաքննութեան յղուի և իր արդէն վերջացեալ խնդիր մը կնկատէ զայս , ձեռքը վեր վերցնէ :

Բոլոր ձեռքերը վեր ամբարձան :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է թէ Ժողովը մէկ քուէի հակառակ իր ամենամեծ մասովը կվճռէ թէ ընցած խնդիր մ'է Խորէն Արքայանի այդ առաջարկութիւնը և պէտք չէ որ խնդրոց կարգը մտնայ :

Այս պահուն Ս. Պատրիարքը նոր հասած ըլլալով , Խորէն Արքայանի քուէարկեալ առաջարկութեան ինչ ըլլալն ուզեց իմանալ : Դիւանը վերստին կարդաց Խորէն Արքայանի ձեռնարկն եզրակացութիւնը :

ԶԱՅՆԵՐ. — Շնորհակալութիւն կը յայտնենք :

Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԱՉԱՆ. — Կուզի իմանալ թէ բոլորովին անպէ՞տ համարուեցաւ իմ առաջարկութիւնս :

ԶԱՅՆԵՐ. — Ոչ , ոչ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ ճիշդ ձեզի պէս վարանման մէջ եմ , կը տեսնէք որ Ժողովն ձեր խօսքերուն հաճութիւն կուտայ , բայց խնդրոց նիւթ ընել չուզէր . զի արդէն որոշուած վերջացած են եղեր ձեր առաջարկութիւնները : Ես յաճախ բացակայութեանս պատճառաւ Ժողովին ամեն գործոց կատար-

եալ տեղեկ չեմ . սակայն լսածներէս դատելով , չեմ կարծեր որ Ժողովն ճիշդ ձեր առաջարկութեան ողուով որոշումն ըրած ըլլայ մինչև ցարդ . ստոյգ է որ դեռ Պէրլինեան վեհաժողովն գործը չկատարած , Ժողովը Ս. Պատրիարք Հօր այդպիսի յանձնարարութիւն մը քուէարկեր է , բայց անկէ ետքը Արքայանն հարցման մը պատասխանելով կերպիւ իւրք համարատուութիւն ըրեր է և Ժողովն յետ բազում յուզմանց և երկար վիճարանութեան հաւանութիւն և վստահութիւն քուէարկէր վստահան տուէր է գործին : Այլ ևս անկէ ետքը Արքայանն սկսած գործը շարունակելու արտօնութիւն չէր կրնար ունենալ . մանաւանդ որ դռնփակ նիստի մը մէջ Արքայանին նոր յանձնարարութիւն մը եղեր է նոր եղանակաւ մը գործադրելու սլոյմանու , որ է Պէրլինի Գործադրութեան Հայկական Ժողովն գործադրութեան յանձնարարութիւնն : Բայց ըստ որում Ժողովն քուէով վճռեց թէ Խորէն Արքայանի առաջարկութիւնները արդէն որոշուած բաներ ըլլալով կրկին խնդրոց նիւթ ընելու հարկ չկայ , ամենուս հնազանդիլ կը պատկանի , և ես կանցնիմ մեր Օրակարգի խնդրոցն :

ԵՈՒՍՈՒՖԵԱՆ Տ. ԷՖ. — Մտթէոս Արքայան իր գրոյն մէջ Պէկեան էֆէնտի նըկատմամբ բազում պատճառաբանութենէ ետքը՝ անոր բարոյսալէս անկեալ վիճակը բաւական համարելով ներումն վճռել կառավարկէ . Խորէն Արքայան անոր պատճառաբանութեանց համամիտ չըլլալով հանդերձ եզրակացութեանը ձայնակից ըլլալն յայտնեց : Երկու երեսփոխանաց առաջարկութիւնն ալ Պէկեան էֆէնտի նկատմամբ ուրիշ բան մը չէ , եթէ ոչ կանոնադրութեան նախատեսած

Այլ պատճառական տնօրէնութիւնը որ կրնայ ներողութեան փոխակերպել : Միայն թէ Ազգեան Էֆէնտի այս պարագային մէջ պատժայ արժանի է, վճուել պատիժը, ետքը սոյն պատիժը կրնայ ներողութեամբ զանց առնուիլ . որովհետեւ ներողութիւն չըլլայ ըսող չկայ մեր մէջ, Եթէ ցաւայի բան մը կայ՝ այն է որ մեր օրաշտօնակիցներէն մին այնպիսի դիրքի մը մէջ գտնուած է որ զինքն արժանի կընէ պատժոյ :

Կեցրակացնեմ թէ Ազգային ժողովը պէտք է իր վճիռը տայ, և Պէկեան Էֆէնտի արժանացած պատիժն որոշուի, ապա սոյն պատիժը կրնայ ներողութեան փոխուիլ, ինչպէս կառավարիկներ մեր Արքայական պաշտօնակիցը :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Ես Պէկեան Էֆէնտի յանցանքը ներուի չըսի . նա իր երեսփոխանական պաշտօնավարութեան մէջ պատշաճից և պատմութեան սահմանէն դուրս ելած է. բայց կիսնդ ընեմ որ նախ կանոնադրութեան պատճառով տրամադրութիւններն այս մասին բացայայտ կարդացուին :

Ատենապետ փաշան անմիջապէս կարդաց նախ երկու երեսփոխանաց առաջարկութեան Ա. մասն՝ որ է .

« Պէկեան Էֆէնտին որպէս յանրապետ անհատանող՝ զանրաց նստի մէջ Բարձրաշնորհ նախագահէն ներում խնդրելու պարտաւոր հրատարակել, ըստ 84րդ յօդուածոյ Ներքին կանոնադրութեան Ազգային ժողովոյ » :

Եւ յետոյ կարդաց կանոնադրութեան 84 յօդուածը :

ԵՒ ԵՆԻՃԵԱՆ Թ. ԷԹ. — Այդ յօդուածին տրամադրած պայմաններն ամբողջ կարդացիք և ըսէք մեզ թէ անոնք ալ ի գործ դրուած են :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Բանի որ խորէն

Արքայան հարցուց կանոնին տրամադրութիւնները, հարկաւ պէտք եղածը պիտի խօսի . զուք ինչո՞ւ կաճագարէք և կընդմիջէք :

Չայս ըսելէ ետև Ատենապետ փաշան կարդաց նաև երկու երեսփոխանաց առաջարկութեան Բ. մասն որ է .

« Պէկեան Էֆէնտի դէմ որպէս կանոնադանց երեսփոխանին՝ ներքին կանոնադրութեան պատճառով զԵֆէն 105րդ յօդուածին տրամադրութիւնն ի գործ դնել, պարտաւանջը յանդիմանութիւն քուէարկելով » :

Ասոր ետևէն կարդաց կանոնադրութեան 105րդ յօդուածն ալ, և շարունակեց երկու երեսփոխանաց առաջարկութեան Գ. և վերջի մասին ընթերցումը որ է .

« Պէկեան Էֆէնտին՝ իւր երեսփոխանական պաշտօնը չարաչար գործածող և ազգին կենսական շահերուն զիտութեամբ վրնատող նկատելով, ընդհանուր օրինաց սկզբբան համաձայն կուզէինք առաջարկել անարժան հռչակել զնա երեսփոխանական ավտուաննալու . սակայն այս առաջարկն ապագային կվերապահենք » :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ինչպէս կտեսնէք առաջարկող երեսփոխանք կանոնադրութեան 84րդ և 105րդ յօդուածները մէջ կրերեն, և անոնց զօրութեամբ կուզեք պատիժ տնօրէնել Պէկեան Էֆէնտի համար իր յանրապետ անհատանող Ս. Պատրիարքի և իր անարդող անհնազանդ Ազգ. ժողովոյ տնօրէնութեան :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ. — Կարծեմ իրաւացի էր իմ ըրած հարցումն . որովհետև պէտք է ճիշդ օրինաց տրամադրութեան համեմատ լինի ինչ որ պիտի լինի : Լսեցինք կանոնադրութեան 84րդ յօդուածն, որ ամբողջ կարդացուեցաւ հիմա : այս յօդուածն որ առաջարկող երեսփոխանք ի վկայութիւն կրերեն և զոր յօդուածին կը կոչեն իրենց առա-

ջարկած պատճապարտութեան գործադրութեանը համար, բոլորովին անպատ է իրենց . Սահմանադրութեան համար ամբաստանութիւն կըսէ կանոնը, Պատրիարքին պաշտօնանկութեան պարագային մէջ . իսկ Պէկեան Էֆէնտի առանկ ամբաստանութիւն մը ըրած չէ . մանաւանդ թէ ամբաստանող չեմ ըսած է . քանի որ ամբաստանողի դերն ընդունած չէ նա, ինչպէս կարելի է այդ յօդուածին տրամադրութեանը առկ ենթարկել զնա : Ուստի ըստ իս՝ այդ յօդուածը առաջարկողաց ամենևին օգնութիւն մը չընելէ վատ, ընդհակառակն նպաստաւոր է Պէկեան Էֆէնտիին . որոյ ըրածն ուրիշ բան չէ, բայց եթէ խօսելու ազատութեան շրջանակէն դուրս ելնել միայն, զոր և չեմ պաշտպաներ :

(Ընդմիջում)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Սորա՛զան, պահմը առաջ Մատթէոս Արքայանի նամակը կարդացուած ժամանակ կարծեմ ըսիք թէ « Ես ալ Մատթէոս Արքայանի ըսածներուն ամենը չընդունելով հանդերձ եզրակացութիւնը կընդունիմ որ է ներողութեան քաղցր եղանակաւ վերջ տալ խնդրոյն » . իսկ հիմա Պէկեան Էֆէնտիին համար առաջարկուած կանոնական պատժոյ տրամադրութիւնները կը քննէք և անոր արարքը կպաշտպանէք . չենք կրնար հասկնալ թէ ինչ է կարծիքիդ . մեզ չփոթութենէ ազատելու համար շնորհ ըրէք, բեմն ելէք և ձեր կարծիքը պարզապէս բացատրեցէք :

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ (Բեճ Ենի-լի). — Կարծեմ թէ ես խառնափնդոր խօսողներէն չեմ . եթէ ըսածս ազէկ չհասկցուեցաւ, ներեցէք որ քիչ մ'աւելի բացատրեմ :

Տեարք երեսփոխանք, Պէկեան Էֆէնտիի դէմ ամբաստանութիւն մը կայ, մանաւանդ թէ պատճառական առաջարկութիւն մը, և այդ պատճառական առաջարկութիւնն օրինաց վրայ հիմնել կուզեն : Ես թէ և Պէկեան Էֆէնտիի խնդրոյն յարուցուած միջոցին ներկայ չէի :

սակայն իր քննդատութեան ճառը կարդացուած ատեն ներկայ գտնուեցայ, համարձակ կըսեմ թէ երեսփոխանի մը ազատութեան շարունակութեամբ է, զի կրիք խօսած է Պատրիարքի ժողովոյդ Արքայանի նախագահին դէմ, այնպիսի ծանր ակնարկութիւններ ընելով, որ թէ և Նորին Արքայութեան սրտին սաստիկ ցաւ պատճառած են, բայց և այնպէս՝ իբրև Հայր հասարակաց, անոր ներողութեանն ալ արժանացած է ի հարկէ : Լիմա Պէկեան Էֆէնտիի համար պատիժ կառաջարկուի օրէնքէն բղխեցնելով . օրէնքին յօդուածը՝ զոր մէջ կրերեն, սա՛ է . (Կանոնադրութեան 84րդ յօդուածը կորուզել) կտեսնէք թէ ինչ պարագաներէ անցնելու է Պատրիարքին դէմ ամբաստանութիւն ըսուածը . կամ Սահմանադրութեան հակառակ ընթացքի մը համար և կամ անոր գործադրութեան անհողութեանը համար կամբաստանուի Ս. Պատրիարքը, և այս պարագային մէջ միայն անոր անկումը կամ կանգնումը խնդիր պէտք է ըլլայ . և այն ալ երբ կանոնաւոր ամբաստանագիր մը աւանդուի Մայր դիւանի վրայ որ անմիջապէս պիտի յղէ Ատենապետաց դիւանին նախաքննութեանը : [Ահա ասոնք են կանոնադրութեան 84րդ յօդուածին տրամադրութիւններն, այն յօդուածին՝ զոր ամբաստանող երկու երեսփոխանք ի վկայութիւն և յօդուածին կրերեն :

Կարծեմ թէ բաւականապէս լուսաւորուեցաւ ձեր խիզճը թէ՛ Պէկեան Էֆէնտիի թէ՛ և բեմական ազատախօսութեան շրջանակէն դուրս ելած է, սակայն քանի որ Պատրիարքին դէմ ամբաստանող չեմ կըսէ, քանի որ կանոնական ամբաստանագիր ալ չէ տուած, և չէ յղուած նախաքննութեան, և քանի որ ժողովին քուէարկութեամբն որոշուած ու վճուած ալ չէ իր ամբաստանող ըլլան, կարելի բան չէ այդ յօդուածը բերել պատշաճեցնել իրեն այս պարագային մէջ : Ուստի կեզրակացնեմ թէ պատժոյ արժանաւոր ըլլան այդ յօդուածով չկրնար հաստատուիլ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ըսել է որ դուք՝

Սրբազան, Պէկեան էֆէնտին պակասութեան մէջ գտնուած է բայց կանոնական պատժոյ արժանացած չէ ըսելով ներում կառաջարկէք գործած պակասութեանը, մինչդեռ Մատթէոս Սրբազան՝ կանոնական պատժոյ արժանաւոր ըլլալը բացատրելով հանդերձ ներողութիւն կառաջարկէ. խօսքը՝ Շահպաղ էֆէնտինին է:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — Պէկեան էֆէնտին խնդրոյն դուռը բացուած ժամանակ Գեր. Իզմիրլեանի կողմէ եկած գիր մը կարդացուեցաւ, որոյ պարունակութիւնը՝ Պէկեան էֆէնտինի կողմէ տեղի գտած անկարգ վարմանց դէմ բողոք կամ անոր հաստատութիւնն էր. իսկ եզրակացութիւնն էր ներել անոր: Այդ ներման առաջարկութիւնն Սրբազանին իր եկեղեցական պարտաւորութեանէն կծագի, որում դէմ ըսելիք մը չունիմ: Անկէ ետք դեռ խնդրոյն չձեռնարկուած, երբ Խորէն Սրբազան իր ճառը ընցուց և զիւանական դործողութիւնը պիտի կատարուէր, Խորէն Սրբազան ելաւ Պէկեան էֆէնտինի խնդիրն ալ խառնեց և Իզմիրլեան Սրբազանին ձայնակից ըլլալը յայտնեց, բացատրելով հանդերձ թէ Պէկեան էֆէնտին իր երեսփոխանական ազատութեանը սահմանէն դուրս ելած է:

Արդեօք Խորէն Սրբազան ի՞նչ ըսել կուզէ, երեսփոխան մը ազատութեան սահմանէն դուրս ելնելէ, Յողովոյս Ս. Նախագահը՝ խարերայ, դաւաճան կոչելէ և անոր մինչեւ այս աստիճան հայհոյելէ ետև ասոնց բնաւ մէկուն համար պատիժ տնօրինել պէտք չէ՞, սյլ ներելու անցնելու է ըսել կուզէ:

Այս կէտին բացատրութիւնը Խորէն Սրբազանին թողով, կանցնիմ այն կէտին, յորում Խորէն Սրբազան՝ իր ներողութեան առաջարկութիւնը հիմնելով Իզմիրլեան Սրբազանի գրաւոր առաջարկութեան վրայ. . . .

Տ. ԽՈՐԷՆ ՍՐԲԱՋԱՆ. (Ընդհանրապէս) — Միտալ է, ամենեւին այնպէս չէ՞, ես ներումն չառաջարկեցի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, կաղա-

չեմ, Սրբազան. ընդմիջելու հարկ չկայ. թողէք ատենարան էֆէնտին շարունակել և յետոյ խօսք առնելով՝ ուղածնուդ շափ հերքեցէք անոր խօսքերը:

ՇԱՀՊԱՋ Ն. ԷՖ. — (Շարունակելով) Երբ այս ներողութեան առաջարկն երեսփոխաններէն մերժուելու տրամադրութիւն տեսնուեցաւ, անմիջապէս Խորէն Սրբազան կանոնադրութեան յօդուածներուն դիմուելու պէտքն երևան հանեց, և ան նց բացաւ որութեանը մէջ նետուելով և որպէս թէ անոնց պարունակութիւնը Պէկեան էֆէնտինի վարմանցը հետ անհամամատ ցոյց տալով՝ կերպիւ մը խնդիրը գոցել փորձեց: Բայց ես կըսեմ որ թէ՛ Իզմիրլեան և թէ՛ Խորէն Սրբազաններուն ներողութեան առաջարկն իրենց եկեղեցական պարտաւորութեանէն կը զխի անոնք՝ իրենց հոգեւորական կոչման համեմատ ասկէ տարբեր առաջարկութիւն մը չէին կըրնար ընել. իսկ մեք պարտազանց երեսփոխանի մը այն նողկալի բռուերն արտասանելը լսելէ ետև և Ս. Նախագահին դէմ այն աստիճան ծանր ամբաստանութիւններ ընելը տեսնելէ ետև, միթէ կարող ենք ներուի ըսել: Այ՛ ո՛չ, մեք կարող չենք ներումն վրձուել, իրաւունքին տէրը կայ, նա պէ՛տք է այդ վճիռը տալ. օրէնքն զմեզ չէ թէ ներող, սյլ դատաւոր հանդիսացուցած է այս վայրկենիս կանոնազանց երեսփոխանի մը դէմ. նախ՝ պարտաւոր եմք մեր դատաւորական պաշտօնը կատարել. ասոյ իրաւանց տէրը կրնայ ներում շնորհել վճուած պատժոյ ջնջման համար:

Կըցաւ իմ սարսափելի կերպով այս վայրկենիս դատաւորական պաշտօնն կատարելու կոչուած ըլլալուս. զի իմ մէկ պաշտօնակիցս պիտի դատաւարտեմ. կամաչեմ իսկ այս առնորէնութիւնը կատարելու ժամանակ, բայց ո՞րն աւելի ցուայի է և ո՞րն ամօթալի, պատժապարտ երեսփոխան մը ունենալ և զայն պատուհասել թէ այսպիսի երեսփոխանի մը արժանաւոր պատիժը շտալով Այդ ային ժողովոյ պատուոյն արատ բերել և գիտէ՞ք որ

եթէ մեք կանոնազանց երեսփոխանը չդատաւարտենք, նա՛ կաղաթի պատժէն մեր ներողութեամբ իսկ մենք կըլլանք պատժապարտ մեր կանոնազանցութեամբ:

Ուստի ինչպէս որ եկեղեցականք իրենց հոգեւորական պարտաւորութեան համեմատ ներել կառաջարկեն, մեք ալ մեր երեսփոխանական պարտաւորութեան համեմատ՝ այդ ներման առաջարկը մէկ դի թողով, փութանք քննել թէ արդարեւ մեր կանոնազանց ընկեր՝ արժանացած է իրեն համար առաջարկուած պատժական տնօրէնութեանց, և զայս վրձուելէ ետև իրաւունքն իր արժողը յանձնենք, թող նա ուզէ նէ ներէ, չուզէ նէ չներէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Մելիքեան էֆէնտինին է:

Այս պահուս Սրբազան Նախագահն ուղեց խօսքին կարգն իրեն տրուիլ, և անմիջապէս խօսքն իրեն տրուեցաւ:

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Շատ պէտք կայ՝ որ այս խնդիրը գոցենք. ժամանակն այնչափ փափուկ է և գործերն այնչափ ստիպողական են՝ որ չեն ներեր մեզի այսպիսի վճերով զբաղիլ, ազգային շահուց պայքարին մէջ յաղթողն ու յաղթեալը փնտուել ազէկ բան չէ:

Պէկեան էֆէնտին թէ և ազգին օգտին համար՝ շատ մը անյարմար խօսքեր ըրաւ ինձ դէմ և ազգին միաբանութիւնը քակտելու փորձեր ցուցուց, բայց ես անոր պէտք եղած պատասխանները տուի. ես ներեր եմ անոր՝ թէ որ ներում պէտք էր. իր խղճմտանքին մէջ է արդէն իր պատիժը. կխնդրեմ որ ալ աւելի չտարածուի այս խնդիրը. վասն զի օտար թերթերու մէջ ալ շատ բաներ սկսած են գրուիլ և հրատարակուիլ արդէն ի վնաս ազգին. ուստի ասոր առջև աննելու եմք նոյն իսկ Պէկեան էֆէնտինին աղաչելով որ ետ կենայ այս բաներէն. . . .

ՁԱՅՆԵՐ. — Ինչ ըսել կուզէ Սրբազանը՝ չհասկըցանք:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ես ալ չհասկըցայ. կաղաչեմ Սրբազան, հաճեցէք բացատրել թէ ի՞նչ պէտք է խնդրեմք Պէկեան էֆէնտինին:

ՍՐԲԱՋԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Օտար թերթերու մէջ շատ բաներ կգրուին ազգին շահուցը դէմ. երէկ բերին ցուցցին ինձ. այսօր տկար ըլլալով հանդերձ՝ անկողնէս ելայ եկայ աղաչելու որ այս խնդիրը վերջացնէք. օտար թերթերու մէջ կտեսնեմ որ այս խնդրոյն՝ որ սոսկ անձնական է, ուրիշ գոյներ կտրուին. պարզապէս Պէկեան էֆէնտին և իր քանի մը համախոհներն իմ վրայ վստահութիւն չունենալնին յայտնել կուզեն. ես ալ եկայ այսօր աղաչելու որ հրատարականս ընդունիք. թող ազգին միաբանութիւնը չքակտի իմ պատճառաւ:

(Ընդհանրապէս և ժխտ)

Խորէն կաղաչեմ որ Պէկեան էֆէնտին խնդիրը գոցէք և անցնիք. Խորէն Սրբազանի առաջարկութեան վերջին երկու մասերը շատ աղէկ գտայ. Ազգին մտաւորական վարդացումը և նիւթական քարգաւաճումը խնդիր ընել կառաջարկէ. ահա ասոնց վրայ խօսեցէք և վիճարանեցէք: Ուսումն. խորհրդոյ մէկ յայտագիրը կարդացի, լաւ առաջարկութիւն մ'ըրած է դատաւարականութեան զարգացման համար, ազգային տուրք մը հաստատել կխնդրէ. ահա այս ալ ձեր խորհրդածութեանը նիւթ կրնայ ըլլալ. շատ կարեւոր և կենսական բաներ կան ազգին համար խորհելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Խօսքը Մելիքեան էֆէնտինին է:

Ա.Ա.ՃԱՃԱՆ Լ. ԷՖ. — (Ընդհանրապէս) Սրբազանին առաջարկութիւնը ինչո՞ւ զանց կառնուք. անոր վրայ ի՞նչ հարկ ուրիշ խօսք տալու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Մի՛ ընդմիջէք կազմելու Ալաճաճեան էֆէնտի. նախ՛ խօսք ուզեցէք և ապա ըստ կարգին խօսեցէք :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Բայց շատ ընդմիջողներ եղան. և պիտի ըլլան դարձեալ մինակ ես չեմ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ դուք ալ այդպէս ընէք և խօսողին բարեկարգութիւնը խանգարելու առիթ տաք, պիտի ստիպէք զիս պաշտօնիս պարտականութիւնը խտրել կատարել :

Ա.Ա.ՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Բայց ինչո՞ւ այդպէս կվարուիք ինձ դէմ :

(Ա.Վ.Կ.)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ձեմ հասկընար թէ ի՞նչ կուզէք Ալաճաճեան էֆէնտի, դուք թերևս կկարծէք թէ երբ Սրբազան Պատրիարքը կարծիք մը յայտնէ, ամենայն տարածայնութիւն պէտք է լռէ և վիճաբանութիւնք դադարին. բայց ատի սահմանադրական ընթացք չէ, և Սրբազանին իսկ մտքէն չանցնիր այդպիսի իրաւանց բռնարարութիւն. մենք առ Սրբազան Հայր մեր ունեցած պատկառանք և յարգանք հանդերձ պարտաւոր ենք խօսողով վիճաբանիլ և որոշել գործերը : Հիմա Պէկեանի խնդրոյն վրայ Սրբազան Պատրիարքը և 2 արքեպիսկոպոս և նաև 2 աշխարհական երեսփոխան խօսեցան, մտիկ ըրինք, պէտք է ուրիշ խօսք ուղղուներն ալ լսենք. վերջն ամենուն եզրակացութիւններն, առաջարկութիւններն և կամ բարեփոխութիւններն մի առ մի քուէի կղնենք, ո՛րը կընդունիք, ա՛ն կվճռէք : Ասկէ դուրս ընթացք չեմ կրնար բռնել, զի ասկէ դուրս Սահմանադրութիւն չկայ :

ՍՐԲԱՉԱՆ ՆԱԽԱԳԱՆ. — Բայց դո՞ւք ալ շատ կարեւորութիւն կուտաք Պէկեանի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ներեցէք, Սրբազան Հայր, ես գրեթէ երեք ամսոյ չափ բացակայ էի, ուստի ամենայնի տեղեակ չեմ մանրամասնաբար. բայց ատենագրութիւններէն կհասկնամ որ երբ Պէկեան էֆէնտի քննադատական ամբաստանութիւնը ներկայացուեր է, Ձեր Սրբազնութիւնն ինքնին յուզեր է այս խնդիրն. կըսէք թէ մեք Պէկեանի շատ կարեւորութիւն կուտանք, բայց միթէ մե՞նք ենք կարեւորութիւն տուողը. խօսողն ըստ ատենագրութեան և ո՛չ իսկ հաճեր է զնա իր ատենին մէջ լսելու : Յանձնախումբ մը դրեր է ամեն բան նախաքըննելու համար, դուք ամենայն ինչ սոյն յանձնախումբին մերկասլարանոց յայտնելու զիջէք էք, իսկ Պէկեան անսաստէր է, և դուք անոր կարեւորութիւն տալով հրապարակաւ խօսիլ տուէր էք և հրապարակաւ զնա խայտառակեր էք. հիմա խօսողն իր իրաւանց և պատուոյն նախանձախնդրութեան և իր պատուական նախագահին պատկառանաց դէմ եղած պակասութեան փոխարինելու դիտմամբ անոր ի հրապարակի ներում խնդրել տալ պէտք է թէ ո՛չ քննելու և որոշելու կը ձեռնարկէ, և դուք կուզէք որ գոցէ՛ խընդիրը, զի քանի յուզուի, առաւել վատթար կըլլայ հետեանքը. մինչև իսկ կառաջարկէք որ Պէկեան էֆէնտիին աղաչենք որ իր ազգալիսա ձեռնարկութիւնները դադարեցունէ. կարելի՞ բան է Սրբազան, այս կերպով խընդիր մը գոցել Սահմանադրական խօսողի մը մէջ :

Խօսքը Մեկիբեան էֆէնտիին է :

(Այս միջոցին Ատենապետ փաշան աթոռը Բ. Ատենապետ Եւուսուֆեան էֆէնտիի թողով, իջաւ երեսփոխանաց կարգը, քիչ մը հանգիստ ընելու) :

ՄԵԼԻԻՔԵԱՆ Գ. ԷՖ. — Երկու երեսփոխանաց կանոնական պատժոյ առաջարկութեանը մասին թեր ու դէմ խօսողներ եղան Եւուսուֆեան էֆէնտի յայտարարեց թէ

պէտք է Պէկեան էֆէնտիի պատժապարտութիւնը վճռուի ու այնպէս ներուի : Պատժապարտութեան հետ ներումը հաշտ չէրթար, մանաւանդ երբ մեք՝ երկու երեսփոխանքս դատապարտութիւն առաջարկեցինք, մեր այս առաջարկութիւնը պատժաբառանեալ է : Իլմիրլեան Սրբազան ալ ներում կառաջարկէ, բայց նոյն իսկ ներում առաջարկած ատեն կյայտարարէ թէ Պէկեան էֆէնտիի անկարգ վարմունքն իւր պիտութեանն և իր երեսկայութեանը խանգարումէն յուսալ եկած է. ասկէ կհետեի թէ պէտք է դատապարտուի և պատժուի. երբ մէկ կողմէ լը իմաստութեանն այս դիտողութիւնն ընել կուտայ, միւս կողմէ իւր եկեղեցական աստիճանն ալ ներում խնդրել կուտայ. ասոր դէմ բան չենք կրնար ըսել :

Խորէն Սրբազանի դիտողութեանցը գալով, նա ալ համաձայնեցաւ իլմիրլեան Սրբազանին՝ սիրուն առաջարկութիւն մը բերած է ըսելով. և թէպէտ անոր գրին ամբողջութիւնը չընդունեց, սակայն Պէկեան էֆէնտիի պակասութիւն ունենալը խոստովանելով հանդերձ պէտք է որ ներուի և խնդիրը գոցուի ըսաւ : Իսկ այն առարկութեանց համար, որով երկու երեսփոխաց պատժական առաջարկութիւնը կանոնադրութեան անհամաձայն ըլլալը հաստատուուից, կըսեմ թէ կանոնը բացայայտ կտրամադրէ թէ ամբաստանող երեսփոխան մը եթէ չապացուցանէ իր ամբաստանութիւնը, ամբաստանողը պէտք որ ներում խնդրէ : Սակայն Խորէն Սրբազան ի՞նչ կըսէ. կանոնաւոր ամբաստանող չկայ և նախաքննութեան յղուած չէ կըսէ. ստոյգ է որ կանոնաւոր ամբաստանող չկայ. բայց ասկէ չհետեիք թէ բնաւ ամբաստանութիւն չկայ, մանաւանդ ամբաստանողին յանցանքն աւելի ծանր է անոր համար՝ որ օրինաւոր ամբաստանութիւն բերել խոյս տուած է, և նենգամիտ հնարքով մը ամբաստանած է զՍրբազան Պատրիարքը. ի սկզբան անդ՝ երբ 12 երեսփոխանաց հարցադրին ի պատասխան Նորին Սրբազնութիւնն իր գրաւոր բացատրութիւնները ներ-

կայեց խօսողին և ատենապետ փաշան նախաձեռնով և կամ նախաքննութեան յղելով խնդիրը դիւանէն վերցունել կառաջարկէր, նոյն միջոցին Պէկեան էֆէնտի խօսեցաւ, խորհրդակցեցաւ, մտնեցաւ և այլ այսպիսի ծանր բաներով խնդրոյն մէջ նետուեցաւ և քօթմանէր՝ պաշտօնական գրքը ունիմ ըսելով շարունակեց իր ամբաստանութիւնները Սրբազան Պատրիարքին դէմ, առանց կանոնաւորապէս ամբաստանող իր ներկայել ժամանակ ունենալու : Խօսողն որովեց որ նախաքննիչ յանձնախումբին երթայ, և չզնայ, տօքիւմանները ցոյց տուր ըսաւ, անոնց անդ բողոքները ցուցուց, այս ձեւերով անարգեց զխօսողն, և իր ամբաստանութիւնները չկրօցաւ ապացուցանել : Այս ամենն ըրաւ Պէկեան էֆէնտի այլ և այլ հնարքներով. այլ ոչ օրինաւոր կերպով. Խորէն Սրբազան կըսէ թէ կանոնադրութեան 84-րդ յօդուածը շղատաւածիք Պէկեան էֆէնտիին այս ըսածներուն. ես կըսեմ թէ աւելի ծանր կերպով կպատասձի :

Այսպիսի 84-րդ յօդուածին համար : Գալով մեր առաջարկութեան Բ. մասին, որ կանոնադրութեան 105-րդ յօդուածին կը վերաբերի, և որոյ նկատմամբ դեռ խօսող չեղաւ, կուզեմ բացատրել թէ ինչո՞ւ համար առաջարկող երկու երեսփոխանքս Պէկեան էֆէնտիին միայն դանրաց նիստի մէջ ներում խնդրելը բաւական չենք համարիր, և կփափաքինք որ կանոնադրութեան 105-րդ յօդուածին համեմատ՝ պարտաւանջ յանդիմանութեան քուէին ալ արժանանայ : Վասն զի՝ Պէկեան էֆէնտիին այս խնդրոյն սկիզբէն մինչև վերջն անպատուած է զխօսողն. և թէ ի՞նչպէս. խօսողն նախաքննիչ յանձնախումբ մը կղնէ այս խնդրոյն համար և կըսէ Պէկեան էֆէնտիին՝ « զնա այդ յանձնախումբին և տօքիւմաններ ցոյց տուր » . նա չեմ երթար կըսէ և այսպէս չհպատակիր խօսողոյս որովամը. միւս կողմէ խարդախութիւն, խախարէ յութիւն և մեքենայութիւններ պիտի յայտնեմ . . .

ՉԱՅՆ ՄԸ. — Դաւաճանութիւն բառն ալ մի՛ մոռնաք :

ՄԵԼԻԻԵԱՆ Գ. ԷՖ. — (Շ-ր-ն-կ-ե-լ) Մի՛ ընդ միջէք, կաղաչեմ. այս բառերը շա՛տ իսկ են. իր գրով ըսածները կյիշատակեմ: Կեզ-ծիք և խարէութիւններ և ինչ պիտի յայտնեմ ըսելով՝ ազգը համայն կյուզէ, գայթակ-ղութեան որոմներ կցանէ, և այն աստիճան անխղճութեան մէջ կյառաջանայ, որ Ար-բաղան Պատրիարքը՝ տօբիւմաններդ բեր տեսնեմ կըսէ, և չբերեր: Ժողովս յանձ-նախմբին տար ցոյց աուր կըսէ, և չտանիր. գոնէ լրագրաց մէջ ալ չհրատարակէր. այլ կպահէ իր քով, մինչև Ս. Պատրիարքը կը-տարաւոր հրաժարման սպառնալեօք կարդա-ցընել տալ հոս ամեն բան: Իսկ կարգացած թղթերն ալ արդէն յայտնի են Ժողովոյդ ինչ որ կսպասուէր իրմէն, այն չէր կարդա-ցածը. տօբիւմաններ՝ այսինքն սլաշտօնական գրութիւններ պիտի ներկայացնէր, և կեզ-ծիք, խարէութիւններ պիտի երևան հանէր. ասոնց և ոչ մէկը կրցաւ ընել. և միթէ այս ըրածը՝ Ժողովս խարել և անարգել չէ՞: Ես այն հաւատքն ունիմ թէ Պէկեան Էֆէնտի խարեց և անարգեց զԺողովս. ուստի կը խնդրեմ որ սարսաւանօք յանդիմանութեան քուէ տրուի: Թէ և երկուք եմք առաջարկող երեսօխոսանքս, բայց շատերը համամիտ են մեզի՝ մեր առաջարկութեան ելք մը տրուե-լու համար:

Ահաւասիկ 58 երեսօխոսանաց կողմէ ստո-րագրեալ գիր մը կայ մեր քով, զոր կյանձ-նեմ Գիւանին, և յանձնեց. որոյ օրինակն է այս.

Ստորագրեալ երեսօխոսանքս՝ ազգին շահերուն և Ազգային Ժողովոյ պատուոյն նա-խանձարնդրութեամբ կիսափաքիմք որ եր-կուց երեսօխոսանաց առաջարկութեան ստի-սողութիւն և ելք տրուի:

Եզիաղար Մ. Մէլիքեան. Գ. Յ. Մէլիք. Գ. Մարկոսեան. Ղաղար Ս. Հովուեան

- Մ. Յ. Տիլեան. Սասալա Իլիսպաշեան.
- Յ. Էսայեան. Արիկ Ունճեան.
- Հ. Սարըբէշիչեան. Մ. Փափաշեան.
- Ն. Մէզպուրեան. Յովհաննէս Մարգարեան
- Տ. Փէշտիմալճեան. Պ. Պապօեան
- Լ. Պալեօղեան. Ս. Մ. Պէլլիքճեան
- Կ. Ս. Իւթիւճեան. Ն. Շահպաղ
- Հ. Մազպուրեան. Ա. Ա. Տիւրքի
- Ս. Պ. Պ. Փափաղեան. Յ. Մերեթմ—Գուլի
- Գ. Գ. Պէրպէրեան. Յ. Նորատունկեան
- Մ. Զօպանեան. Մ. Պահճէղատիւրեան
- Տ. Ա. Կրճիկեան. Կ. Գ. Շահպաղ
- Տ. Գ. Լինանեան. Մ. Յ. Մուրատեան
- Գ. Կորգ Ստիմարաճեան. Մ. Գափամաճեան
- Յ. Յ. Թիւրեան. Յ. Նորատունկեան
- Յ. Պոյաճեան. Գ. Գրասէրեան

Անոնք ալ մեզի կը ձայնակցին յայտա-րարելով թէ իրաւցնէ ժողովս սլաշտիւր վը-տանդի տակ է, և կուզեն որ կանոնական պատիժ ի գործ դրուի, ապագային մէջ այս տեսակ անկարգութեանց դէմն առնուելու համար: Եթէ այսօր դատապարտութեան վճիռ չարձակէ Ժողովս ընդդէմ Պէկեան է-ֆէնտիի, ինչ երաշխաւորութիւն ունինք՝ որ վաղն ես և ուրիշ մը չպիտի ընեմք այն բա-ները՝ զորս ըրաւ Պէկեան Էֆէնտի, այս քա-նի՞ նիստ է որ ժողովոյս զոհել տուաւ իր անսպասեհ վարմունքովը. կառաջարկուի որ ներենք իրեն, եթէ ներելու ըլլանք, մեք արժանի կըլլանք դատապարտութեան: Ալ յառաջ չեմ ելլար, բա՛ւ է այսքանը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խօսքն Ալաճաճեան է-ֆէնտիին է:

ՉԱՅՆԵՐ — Գուրս ելած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարգը խորէն Արբա-ղանին է:

ՉԱՅՆԵՐ — Նոյնպէս գուրս ելած է:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Շահպաղ է-ֆէնտիին է կարգը: Հրամեցէք:

ԲԱԶՄԱԹԻԻ ՉԱՅՆԵՐ. — Բաւական է. քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ քուէի ձայ-ները կըստնան, հարկ է որ Շահպաղ էֆէն-տիի խօսելէն առաջ Ժողովին կամքն հար-ցուցեմ. թերևս վիճարանութեան փակումը կ'սնդրէ:

Չայս ըսելով Ատենապետ էֆէնտին վի-ճարանութեան շարունակութիւնը և կամ փակումը քուէի դրաւ և այս վերջինն ըն-դունուեցաւ միաձայնութեամբ: Հետևապէս Շահպաղ էֆէնտիին մը ձգել սարտաւորեցաւ:

Սոյն միջոցին Ալաճաճեան Էֆէնտի ներս մտնելով, հարցոյց թէ ստո՞չք է որ իր խօս-քին կարգն եկած էր իր բացակայ եղած ա-տենը, և պատասխան ընդունեց Գիւանին թէ նախ իր բացակայութեամբը խօսելու կարգը կորուսած էր, և անկէ ետև Ժողովն վիճարանութիւնը փակել որոշած ըլլալով, ոչ իրեն և ոչ իրմէ՞ ետքը խօսք ուզողներուն կարելի չէ խօսիլ:

ՉԱՅՆԵՐ — Քուէ, քուէ:

Այս պահուն՝ Երեսուֆեան էֆէնտի թող-լով Ատենապետութեան աթոռը, խնդրեց Ատենապետ փաշայէն, որ իր տեղն անցնի:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Հիմա որ վիճարա-նութիւնը փակուած է, պէտք է քուէարկու-թեան ձեռնարկենք որոշումն ընելու համար: Խնդրոյն վրայ թեր ուղէ՞մ փաստարանող-ներն լսեցիք. պատժական տնօրէնութիւն ա-ռաջարկող երեսօխոսանաց ձայնակցող ալ կայ. ընդհակառակն պատիժ տնօրինելու տեղի չկայ կարճ ո՞ղ ալ կայ: Բաց աստի բա-րեօխոսութիւններ ալ ներկայացուց Մա-թէոս Սրբազան. «Պէկեան էֆէնտիի բարո-յապէս անկեալ վիճակն բաւական համարե-լով, անոր արժանացած պատիժը շտնօրի-նել և ներմամբ խնդիրը վերջացնել կառա-ջարկէ»: Սրբազան Պատրիարք Հայրն՝ սոյն խնդրոյ երեսէն երեսօխոսանութեան մէջ մտած անհամաձայնութեան խմորը բառնա-լու համար, ո՛չ պատժոյ տնօրէնութիւն և

ո՛չ ներման շնորհ ընել, այլ պարզապէս գո-ցել խնդիրը կառաջարկէ, և մինչև իսկ կու-զէ խնդրել Պէկեան էֆէնտիին որ ազգա-վնաս հրատարակութիւններն և ձեռնարկու-թիւններն զպարեցունէ: Խորէն Սրբազան նախ Մատթէոս Սրբազանի ըսածներուն ամ-բողջութիւնը շնորհունելով հանդերձ ներս մ' ընորհելու մտին անոր կամակից ըլլալ ցոյց տուաւ. բայց ետքը Պէկեանի ըրածը ամբաս-տանութիւն չէր, այլ պարզապէս երեսօխո-խանաց ատենախօսական իրաւանց սահմա-նէն զարտուղութիւն մը, ուստի առաջարկ-եալ պատիժներն անոր չեն պատշաճիր ընե-լով: պատժոյ տնօրէնութիւնը մէկդի թո-ղուէլ առաջարկեց: Կոխիմք ուրեմն քուէար-կութեան՝ բարեօխոսութիւններէ սկսեալ. նախ և առաջ Սրբազան Պատրիարքի առա-ջարկած բարեօխոսութիւնը քուէի կզնեմ, որ է ՍՈՂ պատժենք և ոչ ներենք. այլ խն-դիրը բողբոլիմ գոցեմք, խնդրելով Պէկեան էֆէնտիին՝ որ իր ազգավնաս ընթացքէն ետ կենայ:

ԱՆԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ազգամիտս ըն-թացքը չըսա:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ ԷՖ. ԵՒ ԱՅԼԻՔ — Ըսաւ:

ԺԱՄՈՒԿՈՉԵԱՆ Պ. ԷՖ. — Բաց ի ազգա-վնաս բառէն կընդունինք միւսները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Եթէ Պէկեան է-ֆէնտիի ընթացքն ազգօգուտ ըլլար, աղա-չենք որ գանձք գաղթեցունէ չէր ըսէր Նո-րին Արաղնութիւնը:

(Ա.Է.Վ.Վ.)

Ատենապետ փաշան քուէի դրաւ Ս. Պատ-րիարք Հօր առաջարկութիւնը փորձով և հա-կափորձով, և Ժողովն 7 քուէի դէմ 28 քուէ-ով մերժեց առաջարկութիւնը:

ԺԱՄՈՒԿՈՉԵԱՆ Պ. ԷՖ. (Որո՞ք էնէլէլ) — Յանուանէ նշանակեցէք մեզ որ ընդունեցինք Ս. Հօր առաջարկած բարեօխոսութիւնը:

ՉԱՅՆԵՐ. — Չըսար, չըսար:

ԱՆԱՃԱՃԵԱՆ Հ. ԷՖ. — Ինչո՞ւ պիտի չը-լայ, ըստ կանոնի մենք կպահանջենք:

(Ն.Է.Վ.Վ.)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Կանոնը չներէր որ յե-մ-է-լ-է-լ կատարուած քուէարկութեան մէջ թեր ուղէ՞մ քուէարկուաց և կամ ձեռնպա-

հից անուններն նշանակուին, առի ըստ կանոնի յայտնի բուհարկութեան համար կըսայ և դուք շինող բեցիք :

Ժ.Ս.ՄԱՆՈՒՆՆԻ Պ ԷՖ. — Բայց առի մեզ անձնական խնդիր է, մենք կողահանջենք, պէտք է մեր անուններն արձանագրուին ատենագրութեան մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Նստեցէք, հանդարտեցէք, խամահոջեան էֆէնտի, ինչ որ կողահանջէք իրր երեսփոխան պէտք է որ կամ կանոնագրութեան համաձայն ըլլայ և կամ կրկնող ունենաք և խորհրդ մեծամասնութիւնն ընդունի զայն, որովս պի կանոնի կարգ անցնի և դորձագրուի. ձեր կամքը տիրող օրէնք չկրնար ըսն խորհրդոյ մէջ. նոյե իսկ ձեր անձնականին վերաբերեալ խնդրոց մէջ :

ԲԱԶՄԱԹԻԻ ԶԱՏՆԵՐ. — Քուէարկութիւնը շարունակեցէք :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քուէարկութեան կարգը խորէն Սրբազանի առաջարկութեանն է, որ սա՛ է :

« Առաջարկող երկու երեսփոխանաց մէջ բերած կանոնական արամագրութիւնները չեն պատշաճիր ներկայ խնդրոյն, և թէ Պէկեան էֆէնտի պարզապէս իօնելու աղատութեան սահմանն անցած ըլլալով իրր ամբաստանող պատժուելու արժանի չէ. ուստի առաջարկեալ պատիժներն մեկդի թողուլ պէտք է » :

Այս անաջարկութիւնն ալ բուէի դրրուելով, խորհրդ մերժեց զայն ստուար մեծամասնութեամբ :

Յետոյ՝ Մատթէոս Սրբազանի գրաւոր առաջարկութիւնը քուէի դրուեցաւ, զոր նոյնպէս մերժեց խորհրդ ստուար մեծամասնութեամբ :

Կորզն եկաւ երկու երեսփոխանաց առաջարկութեան կանոնական երկու մասերմ քուէի գնելու :

Ատենապետ փաշան քուէի դրաւ երկուց երեսփոխանաց առաջարկած պատժական տրուորկութեանց նախ առաջին մասը ըսելով « ս'վ որ Պէկեան էֆէնտի իրր յանիրաւի ամբաստանող կնկատէ և հարկ կտեսնէ դատապարտել զնա քուէից նոյն ժեզ ներքին ինքնու Ս. Պատրիարքին ձեռքը վեր վերցունել շնորհ ընէ » :

Ատենապետար մեծամասնութիւն ձեռնարած հաւանութիւն յայտնեցին (Ատենաճեան և խամահոջեան էֆէնտիներ ընդմիջ ջեղով և բարձրաձայն — ո՛չ, ո՛չ, ընդունեն ի՛նչէ՛, առանց դատաստանի պատիժ չանօրինուիր, պօռացին) :

Ատենապետ փաշան Քուէարկութիւնը շարունակելով շահափորձն ըրաւ սա՛ բառերով « Ո՛վ որ ընդ հակառակն զՊէկեան էֆէնտի ամբաստանող շնկատի, և անոր բարձր սակ շափաղանց բննող առութիւն դատելով և քառասուն շաբաթ որ քուէի տնօրէնութիւնը, զնա անպատիժ կուզէ թողուլ, ձեռքը վեր վերցունել շնորհ ընէ » :

Ութը ձեռք միայն վեր վերցունեցան :

Ալաճաճեան, խամահոջեան, Ելմէնիճեան, Այվազեան, և Պէկեան էֆէնտիներն բազմաթիւ և զիրեար յորդորելով զուրս ելան խորհրդ սրահէն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ալաճաճեան էֆէնտին և իր ընկերները կկարծեն թէ իրենց կամքը պէտք է տիրող օրէնք ըլլայ խորհրդին մէջ. կոցաւթ և կպարտաւորիմ իմ կանոնական պարտքս կատարել անոնց ընթացքին դէմ :

Չայս բնէէ ետե Ատենապետ փաշան առաջարկութեան Բ. մասն ալ փորձով և հակափորձով քուէի դրաւ և խորհրդ ստուար մեծամասնութեամբ ընդունեց պարտաւանօք յանդիմանութեան ենթարկել զՊէկեան էֆէնտի իրր անարդող և անսաստող խորհրդ սրահմանց :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ազգային խորհրդ կդատապարտէ զՊէկեան էֆէնտի դանրաց նսաի մէջ ներուժ խնդրել Ս. Պատրիարքին իր ըրած անիրաւ ամբաստանութեանց համար : Նա՛ եւ պարտաւանօք յանդիմանութիւն կրել, խորհրդ սրահմանցը արձամարտող և անսաստող գանուելուն համար : Եւ Պէկեան էֆէնտի այսօր ներկայ չըլլալով սոյն պատիժներն չեն կրնար տնօրինուիլ. ուստի անոնց դորձագրութիւնը կմնայ այն նիստին ուր առաջին անգամ ներկայ գանուի Պէկեան էֆէնտի երեսփոխան :

Յաջորդ նիստը 15 օրէն գումարելու որոշմամբ ասեանը վերցաւ ժամ 10 ու կէտին :

Ատենապետի Ս. Յ. Մէլիքեան Ատենապետ Ս. Ա. Անանեան

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ՍԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ՄԱԼՈՒՅ ՅԱՏԿԱՅԵՆՈՒ

Կը ծախուի ի Ղիւանատան Պատրիարքարանի, և Ղալաթիայ
Ս. Լուսաւորիչ Եկեղեցւոյ բանկայք և Հայ գրաւորանուայ քով: